Ճանաչել գիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

20(413)
30.06.2015
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՂՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը հունիսի 18-ին հանդիպում է ունեցել 2014-2015 ուստարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի Հայաստանի Հանրապետության եզրափակիչ փուլում մրցանակային տեղեր գրաված ու գովասանագրերի արժանացած ԼՂՀ մասնակիցների եւ Արցախի պետական համալսարանը գերազանցության դիպլոմով ավարտած մի խումբ ուսանողների հետ:

Նախագահն արժեքավոր նվերներ եւ դրամական պարգեւներ է հանձնել աշակերտներին, ուսուցիչներին ու շրջանավարտներին եւ հանդես եկել ողջույնի խոսքով:

Երկրի ղեկավարը նշել է, որ պետությունը շահագրգռված է ունենալ կրթված ու բազմակողմանի զարգացած սերունդ եւ անում է հնարավորն այս ոլորտում առկա խնդիրները լուծելու ուղղությամբ՝ գիտակցելով, որ երկրի ապագան մեծապես կախված է նրանից, թե ինչ դաստիարակություն եւ կրթություն կստանա երիտասարդությունը:

Տեղեկատվությունը՝ ըստ Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության

ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՅԼ

Արցախի պետական համալսարանի և Բելգիայի Լյուվենի կաթոլիկ համալսարանի(ԼԿՀ) միջև 2014թ. հոկտեմբերի 13-ին Ստեփանակերտում կնքված համագործակցության հռչակագրի շրջանակներում հունիսի 7-10-ը ԱրՊՀ պատվիրակությունը՝ ռեկտոր Մանուշ Մինասյանի գլխավորությամբ, աշխատանքային այց կատարեց Բելգիա: Միջբուհական համագործակցության եվրոպական առաջին փորձին էր նվիրված Արցախի մայր բուհի գիտխորհրդի նիստերի դահլիճում հունիսի 16-ին կազմակերպված ասուլիսը:

Արցախի պետական համալսարանի ռեկտոր Մանուշ Մինասյանի խոսքով՝ ԱրՊՀ-ում միջբուհական համագործակցությունը դիտվում է որպես բուհի զարգացման կարևոր երաշխիք: Մասնավորապես, ՀՀ բոլոր առաջատար բուհերի՝ ՌԴ, մերձբալթյան երկրներում, Մերձդնեստրյան բուհերի հետ համագործակցությունը նաև համաշխարհային կրթական գործընթացներից հետ չմնալու կարևոր գործոն է, ինչու չէ՝ նաև մի փոքրիկ ներդրում Արցախի Հանրապետության ճանաչման ուղղությամբ: Անցյալ տարվանից բավական աշխատանք է կատարվել այս ուղղությամբ, իրականացվել են կոնկրետ միջոցառումներ: Այդ շարքում առանձնանում է Լյուվենի կաթոլիկ համալսարանի հետ կնքած հուշագիրը, որով կողմերը պատրաստակամություն են հայտնել համագործակցել կրթական և հետազոտական ոլորտներում: Այն ներառում է կրթական գործընթացներում իրականացվող հաջողված ծրագրերի վերաբերյալ տեղեկությունների փոխանակում, կրթական և հետազոտական ոլորտներում կազմակերպական և վերլուծական խորհրդատվական ծառայությունների մատուցում, կրթական և գիտական միջոցառումներին երկու կողմերի դասախոսների և ուսանողների այցելություններ, համագործակցություն ֆակուլտետների, հետազոտական կենտրոնների և ուսանողական կառույցների միջև, ինչպես նաև ուսանողների և դասախոսների փոխանակություն: Ի դեպ, այս համագործակցության սկիզբը և զարգացումը հաջողվել է Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և ՀՅԴ Հայ Դատի եվրոպական գրասենյակի ջանքերով: Դրանում մեծ է նաև Լյուվենի կաթոլիկ համալսարանի պրոֆեսոր, նախկին ռեկտոր Բեռնար Կուլիի դերը, ով կրում է Արցախի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչումը: Նա հայագետ է, երկու տասնյակ տարի շարունակ աշխատում է ՀՀ կրթական համակարգիի հետ, իրականացնում է տարբեր ծրագրեր, և անցած տարվանից այդ ծրագրերի մեջ ընդգրկել է նաև Արցախի պետական համալսարանը:

Լյուվենի կաթոլիկ համալսարանը բավական հին է, հիմնադրվել է 1425թ., ունի 14 ֆակուլտետ, հայագիտության ամբիոնն ունի 200 տարվա պատմություն: Հիմնական առանձնահատկությունն այն է, որ քաղաքի բնակչության մեկ երրորդն ուսանողներ են և դասախոսներ, շուրջ 35 հազար ուսանող ունի: Քաղաքի կյանքում համալսարանը մեծ դերակատարություն ունի. այստեղ ամեն ինչ համալսարանի անցուդարձով է պայմանավորված: Նրա բյուջեն դրամական եկամուտներ է ապահովում սեփականության տարբեր միջոցներից և ֆինանսական դժվարություններ քիչ ունի:

Մ. Մինասյանի խոսքով՝ այցը Բելգիա հնարավորություն տվեց ավելի հանգամանորեն ու առարկայորեն քննարկել համագործակցության հետագա ծրագրերը:

Այցի առաջին օրը կայացել է հանդիպում ռեկտոր Վինսենթ Բլոնդելի հետ: Քննարկման ժամանակ հստակեցվել են համագործակցության առաջիկա տարվա հիմնական ուղղությունները: Դրանք երկուսն են՝ դասախոսների և ուսանողների փոխանակություն և հետազոտական ծրագրեր: Հաջորդ օրը հանդիպումներ են կայացել տարբեր ձևաչափերով. նախ՝ միջազգային համագործակցության գրասենյակում, որտեղ գրասենյակի պատասխանատուների հետ

փորձել են հստակեցնել իրենց աշխատանքի մեխանիզմները: Լյուվենցիները ներկայացրել են հիմնականում ուսանողների փոխանակության, շարժունակության իրենց փորձը, որը բավականին հարուստ է: «Էրազմուս». այսպես է կոչվում այն ծրագիրը, որը Լյուվենի կաթոլիկ համալսարանը, որպես եվրոպական կրթական դաշտի ներկայացուցիչ, ապահովում է ուսանողների 30 տոկոսի շարժունակությունը:

Քննարկվել են նաև այն պայմանները, որով պետք է այդ փոխանակությունն իրականացվի: Արդյունքում հստակեցվել են մասնագիտությունները, որոնց գծով պետք է առաջին քայլերը կատարեն: Դրանք տնտեսագիտություն և իրավագիտություն մասնագիտություններն են: Մ. Մինասյանը նշեց, որ հաշվի են առնվել մի շարք հանգամանքներ. նախ՝ Արցախի տնտեսության այս ոլորտներում եվրոպական փորձը շատ ավելի օգտակար կլինի, բացի դրանից, ուսանողներն այդ ոլորտում և՛ գիտելիքների, և՛ օտար լեզվի իմացության առումով ավելի պատրաստ են իրենց ուսումն անցկացնել արտերկրյա բուհում: Ֆինանսական խնդիրներ, անշուշտ, կլինեն, որը կփորձեն լուծել կրթական հիմնադրամների, ծնողների ու նաև համալսարանի միջոցներով:

Երկրորդ՝ հետազոտական ուղղությամբ քննարկումների մասին ներկայացրեց ԱրՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր, համագործակցության արցախյան կողմի համակարգող Վիտյա Յարամիշյանը: Հանդիպումը կայացել է նեղ մասնագետների՝ քաղաքագետների, տնտեսագետների, հոգեբանների հետ: Աշխատել են ներկայացնել այն բնագավառները, որոնք կարող են հետաքրքրություն ներկայացնել Լյուվենի համալսարանին: Ցուցադրել են ԱրՊՀ լրատվության բաժնի կողմից պատրաստած ֆիլմը, որը լավ տպավորություն է թողել և հետաքրքրություն առաջացրել Արցախի նկատմամբ:

ԼԿՀ ղեկավարությունն առավել կարևորում է այնպիսի կապերը, որոնք կկայանան և կզարգանան հորիզոնական ուղղությամբ՝ ուսանող-ուսանող, դասախոս-դասախոս և հետևաբար նաև՝ հետազոտական թեմաների ուղղվածություն: Վ. Յարամիշյանը նշեց, որ փորձում են գտնել այնպիսի թեմաներ և ուղղություններ, որոնք կարող են հետաքրքիր լինել եվրոպական առաջնակարգ համալսարանի դասախոսների և ուսանողների համար: Կենտրոնացել են քաղաքագիտական թեմաների վրա՝ հաշվի առնելով, որ Արցախը հակամարտության գոտի է, և կոնֆլիկտաբանության խոշոր մասնագետներ կան այդ համալսարանում, և նրանց համար հետաքրքիր է ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման թե՛ իրավիճակը, թե՛ ընթացքը, թե՛ հեռանկարները: Մյուս ուղղությունը, որ Արցախը կարող է հետաքրքիր լինել եվրոպական համալսարանին՝ հնագիտական և հայագիտական հետազոտություններն են. Արցախը, որ մի թաքնված գանձ է, նրա պատմական արժեքները, հուշարձանները, հնագիտական կոթողները կարող են հետազոտական հետաքրքիր ոլորտ ներկայանալ Լյուվենի համալսարանի դասախոսների և ուսանողների համար, կարծում է ԱրՊՀ պատվիրակության անդամը: Մյուս ուղղությունը, նրա կարծիքով, կարող է լինել Արցախի հետպատերազմական իրավիճակը, որը անվանում ենք դանդաղ պատերազմ: Ըստ նրա՝ այդպիսի վիճակ երևի չկա ողջ աշխարհում. պատերազմից հետո չավարտված պատերազմի իրավիճակ, որը նույնպես հետաքրքիր հետազոտական լայն դաշտ կարող է ապահովել բելգիացի գործընկերների համար: Ուղղություններից թերևս ամենահետաքրքիրը Արցախի չճաշխարհիկ բնությունը կարող է լինել իր կենսաբազմազանությամբ: Պարզապես մեր ուսանողներն ու դասախոսները պետք է ակտիվ լինեն իրենց նախաձեռնողականությամբ և հետաքրքիր թեմաներով հանդես գան. այս համոզման է Վ. Յարամիշյանը:

Բնականաբար, հարևան երկիրը չէր կարող անտարբեր լինել այդ համագործակցության նկատմամբ: Վ. Յարամիշյանը մի հետաքրքիր դրվագ պատմեց: Ադրբեջանական պատվիրակությունն աճապարել էր իր դժգոհությունը հայտնել Արցախի մայր բուհի և եվրոպական առաջնակարգ համալսարանի միջև ակնկալվող համագործակցային պլանների մասին՝ ակնկալելով Բեռնար Կուլիի ազդեցությունը՝ դադարեցնելու այդ համագործակցությունը: Բայց պրոֆեսորը պատասխանել էր, որ այդ համագործակցության նախաձեռնողը հենց ինքն է, և ադրբեջանական պատվիրակությանը ոչինչ չէր մնում անելու, քան թողնել և հեռանալ:

Պատվիրակության անդամներն իրենց տպավորությունները կիսեցին նաև ուսման վարձավճարների, դրանց մի մասը՝ լավագույն ուսանողներին փոխհատուցելու, գիտելիքի միջոցով գումար վաստակելու եվրոպական գործընկերների փորձի մասին՝ այդ կապակցությամբ նշելով, որ Արցախի մայր բուհը որակի ապահովման խնդիր ունի:

Ասուլիսի ընթացքում հնչեցին տարբեր հարցեր ԱրՊՀ գործընթացներին վերաբերող:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝

ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը հունիսի 25-ին մասնակցել է Արցախի պետական համալսարանում մագիստրատուրայի բաժնի շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությանը: Մայր բուհը 2014-2015 ուսումնական տարում թողարկեց 188 մագիստրոսներ, որոնցից 42-ը գերազանցության կամ, ինչպես ընդունված է ասել, կարմիր դիպլոմ ստացան: Նրանց ավարտական վկայականները հանձնեցին կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը և ԱրՊՀ ռեկտոր Մ. Մինասյանը: Իսկ համալսարանի 6 ֆակուլտետներ ընդգրկող 146 մագիստրոսների դիպլոմները հանձնեցին ֆակուլտետների դեկանները:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարը, ողջունելով շրջանավարտներին, ընդգծել է Արցախի մայր բուհի ավանդը հանրապետության կադրերի պատրաստման գործում, մաղթել է նրանց կանգ չառնել և շարունակել նվաճել գիտության բարձունքները. «Ցանկանում եմ, որ ձեր բարի ու նվիրական բոլոր երազանքները իրականություն դառնան, և որ ամենակարևորն է, լինեք ձեր մասնագիտությանը առավել մոտ ու հետևողական՝ այն ծառայեցնելով հասարակության շահերին: Հավատացած եղեք, որ հենց դա է ձեր կյանքի կարևոր գործառույթներից մեկը»:

Մագիստրոսներին իր բարեմաղթանքներն է հղել նաև ռեկտոր Մանուշ Մինասյանը: Նա համոզմունք է հայտնել, որ համալսարանի շրջանավարտները կարդարացնեն իրենց հույսերը, և նրանց մասին կլսեն միայն դրականը: «Մեր հասարակական գիտակցության և պետական քաղաքականության մեջ կրթությունը դիտվում է որպես ազգային արժեք, որի բավարար մակարդակը հնարավորություն է տալիս մեծ ձեռքբերումներ ունենալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Այսօր ձեր կարիքը (հատկապես՝ լավագույնների) մեծապես զգում է Արցախ աշխարհի գիտության բնագավառը: Ուրախ կլինենք ձեզնից լավագույններին տեսնել նաև մեր դասախոսների հետ՝ նույն շարքերում»,- ասաց Մ. Մինասյանը:

***

ԱրՊՀ գիտխորհրդի 2014-2015 ուստարվա ամփոփիչ նիստում ընդունված որոշման համաձայն՝ նոր ուսումնական տարվանից կրթաթոշակի կարժանանան ոչ միայն գերազանց առաջադիմությամբ ուսանողները, այլ նաև լավ առաջադիմություն, հասարակական ակտիվություն և պատշաճ վարքագիծ ունեցող ունեցողները:

Այդ մասին տեղեկանում ենք ԱրՊՀ կայքից:

ՈՒՍՊԼԱՆ

Գրանցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2015 թվականի հունիսի 22-ին
Պետական գրանցման համարը 10515110
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար
Ա. Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» հունիսի 2015թ. N 119-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ֆինանսատնտեսական բաժնին՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումն իրականացնել՝ հիմք ընդունելով սույն հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլանները:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը և կրթության պետական տեսչությանը՝ ապահովել ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ օրինակելի ուսումնական պլանների պահանջներին համապատասխան:
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Հավելված
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2015 թվականի հունիսի 11-ի
N 119- Ն հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ՀԱՆՐԱԿԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

Ի.ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ Հաստատություն) 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (այսուհետ՝ Ուսումնական պլան), բացառությամբ 7-րդ աղյուսակի, ունեն երկու՝ պետական և դպրոցական բաղադրիչ: Պետական և դպրոցական բաղադրիչները պարտադիր են և պետական ուսումնական հաստատություններում ֆինանսավորվում են պետական բյուջեից: Հաստատությունը Ուսումնական պլանի հիման վրա դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինմամբ հաստատում է տվյալ ուսումնական տարվա իր ուսումնական պլան(ներ)ը:

1. Հաստատության Ուսումնական պլանը սահմանում է միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների, և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:
2. Պետական բաղադրիչով սահմանված ժամաքանակում փոփոխություն կարող է կատարվել միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համաձայնությամբ՝
   1) արտակարգ ընդունակություններ ունեցող սովորողների ուսուցումն առավել բարենպաստ պայմաններում կազմակերպելու համար.
   2) բազմահամակազմ կամ թերբեռնված դասարանների առկայության դեպքում.
   3) Նախարարության կողմից երաշխավորված այլընտրանքային ծրագրերով ու մեթոդներով ուսուցում իրականացնելու դեպքում:
3. Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի տնօրինման կարգը սահմանված է՝
   1) «Ընդհանրական պարզաբանումներ»-ում.
   2) օտար լեզվի ընտրությունը՝ «Օտար լեզվի ընտրության կարգ»-ում:
4. Ուսումնական պարապմունքները Հաստատությունում սկսվում են 2015 թվականի սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2016 թվականի մայիսի 27-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:
5. Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է՝ «Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող հաստատության 2015-2016 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների» հիման վրա՝ յուրաքանչյուր սովորողի համար կազմելով անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ):
6. Ուսումնական պլանի պետական պարտադիր և դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման ապահովմանը:
7. Հաստատությունում (2-12-րդ դասարաններ) գործում է սովորողների գնահատման 10 միավորային սանդղակ:
8. Գիտելիքների ստուգումների, հիմնական և միջնակարգ կրթության ավարտական և պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման այլ սանդղակները բերվում են գնահատման 10 կամ 20 միավորային գրանցման:
9. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների (գնահատականի) հիման վրա՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ 10-րդ կետով նախատեսված դեպքի:
10. Առաջին դասարանում սովորողներին ընթացիկ և ամփոփիչ գնահատականներ չեն նշանակվում. ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով: Տարեկան ամփոփիչ գնահատման նպատակով կազմվում է յուրաքանչյուր սովորողի կրթական զարգացման բնութագիրը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 846-Ն հրամանով հաստատված կարգի:
11. Հաստատությունում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:
12. Տարրական դպրոցում յուրաքանչյուր դասաժամի միջնամասում որոշակի ժամանակ հատկացվում է լիցքաթափող և վերականգնող վարժություններին ու խաղերին՝ Նախարարության մեթոդական ցուցումների համաձայն:
13. Ուսումնական տարվա ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2015 թվականի նոյեմբերի 2-ից նոյեմբերի 8-ը ներառյալ, ձմեռային՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ից 2016 թվականի հունվարի 10-ը ներառյալ, գարնանային՝ 2016 թվականի մարտի 14-ից 20-ը ներառյալ:
14. Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2015 թվականի հոկտեմբերի 26-ից նոյեմբերի 8-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ից 2016 թվականի հունվարի 24-ը ներառյալ, գարնանայինը՝ 2016 թվականի մարտի 14-ից 27-ը ներառյալ:
15. Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2015 թվականի նոյեմբերի 2-ից նոյեմբերի 8-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ից 2016 թվականի հունվարի 24-ը ներառյալ, գարնանայինը՝ 2016 թվականի մարտի 14-ից 20-ը ներառյալ:
16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Ստեփանակերտի քաղաքապետարանի) (այսուհետ՝ Լիազոր մարմին) ենթակայության հաստատությունների համար սույն հրամանի հավելվածի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետներում Հաստատության նախաձեռնության դեպքում Լիազոր մարմնի կողմից կարող են կատարվել փոփոխություններ: Լիազոր մարմինը փոփոխությունները առնվազը հինգ աշխատանքային օր առաջ համաձայնեցնում է Նախարարության հետ:
17. Հաստատությունը (անկախ ենթակայությունից) դեկտեմբեր, հունվար, փետրվար ամիսների ընթացքում եղանակային անբարենպաստ պայմանների դեպքում կարող է նախատեսել մինչև տաս օր տևողությամբ հավելյալ արձակուրդ՝ բաց թողնված ժամերը մինչև ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու և ըստ Հաստատության ենթակայության՝ Լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով: Լիազոր մարմինն այդ մասին տեղեկացնում է Նախարարությանը հինգ աշխատանքային օրվա ընթացքում.
   1) Նախարարության ենթակայության հաստատություններում սույն հրամանով հաստատված հավելվածի 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաև Հաստատության կողմից հավելյալ արձակուրդի նախատեսումը կատարվում են Հաստատության նախաձեռնությամբ, Նախարարության համաձայնությամբ.
   2) Ոչ պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների տևողությունը և ժամկետները, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները սահմանում է հիմնադիրը՝ այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ պահելով Նախարարությանը:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

18.Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգ.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը հատկացվում է Ուսումնական պլանի պետական բաղադրիչով տվյալ դասարանի պետական պարտադիր առարկայացանկում նախատեսված և (կամ) Նախարարության կողմից երաշխավորված լրացուցիչ առարկայացանկում ընդգրկված առարկաներին, հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման ծրագրերի իրականացմանը և (կամ) սովորողների նախասիրություններին, Հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:

2) Նախարարության կողմից հաստատված ծրագրերով երաշխավորվում է «Կիրառական տնտեսագիտություն» (9-րդ դասարան), «Կյանքի հմտություններ» (2-8-րդ դասարաններ), «Բնապահպանություն» (7-8-րդ կամ 8-9-րդ դասարաններ), «Էկոլոգիա» (8-9-րդ դասարաններ), «Էներգիայի և ռեսուրսների օգտագործում» (7-րդ կամ 8-րդ դասարան), «Ֆերմերային գործ» (11-12-րդ դասարաններ), «Տրամաբանություն» (11-րդ դասարան), «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ և 11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի 10-11-րդ դասարաններ), «Հայկական հարցի պատմություն (11-րդ դասարան)», «Հոգեբանություն» (7-8-րդ դասարաններ), «Մշակույթի պատմություն» (7-9-րդ դասարաններ) առարկաների ուսուցումը: Նշված առարկաների ուսուցումը այլ դասարաններում Հաստատության կողմից կարող է իրականացվել դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

3) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

4) Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ ելնելով Հաստատության, դասարանի պատրաստվածությունից, մանկավարժներով, ծրագրերով, դասագրքերով և երաշխավորված լրացուցիչ առարկայացանկի որևէ առարկայի լիարժեք ուսուցման կազմակերպման նպատակով Նախարարության կողմից հանրակրթական ուսումնական հաստատությունների համար երաշխավորված այլ ուսումնական գրականությամբ ապահովվածությունից և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ այլ պայմաններից, ինչպես նաև Նախարարության հանձնարարականներից:

5) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը պարտադիր է:

6) Դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի շրջանակում դասավանդվող առարկայացանկը ամրագրվում է Հաստատության ուսումնական պլանում և դասացուցակում:

ՈՒՍՊԼԱՆ

19. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում.

1) 12-րդ դասարանում առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական բոլոր թեմաների ուսումնասիրությունն իրականացվում է առաջին կիսամյակում:

2) 12-րդ դասարանում Ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը երկրորդ կիսամյակում հատկացվում է խմբային պարապմունքների միջոցով պետական քննական (ավարտական, միասնական) առարկաների ուսումնական ամբողջ նյութի կրկնությանը: Այդ նպատակով կազմվում է սովորողների խմբային ուսուցման ժամանակացույց:

3) Երկրորդ կիսամյակում քննական առարկաների (բացառությամբ «Ֆիզկուլտուրա» առարկայի) կրկնությանը հատկացված ժամաքանակը չի կարող պակաս լինել այդ առարկաներին առաջին կիսամյակում Ուսումնական պլանով հատկացված ժամաքանակից:

4) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում յուրաքանչյուր դասարանի (խմբի) համար ուսուցումն իրականացվում է խմբային եղանակով՝ յուրաքանչյուր սովորողի համար շաբաթական 34 ժամ ծավալով:

5) Առաջին կիսամյակում համալրված դասարաններում երկրորդ կիսամյակում «Հայոց լեզու և հայ գրականություն» («Հայոց լեզու», «Հայ գրականություն»), «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն»), «Հայոց պատմություն», «Ֆիզկուլտուրա» քննական առարկաների դասաժամերին սովորողների ուսումնառությունը շարունակվում է նույն համակազմով՝ որպես մեկ ուսումնական խումբ: Սովորողների ուսումնառության արդյունքները դասամատյանում գրանցվում են ըստ Ուսումնական պլանի՝ 12-րդ դասարանի պետական պարտադիր առարկայացանկի:

6) Բնագիտական առարկայի (առարկաների) դասաժամին տվյալ Հաստատության 12-րդ դասարանի (դասարանների) բոլոր սովորողները խմբավորվում են՝ ըստ իրենց կողմից ընտրված բնագիտական առարկայի (առարկաների): Նույն սկզբունքով կատարվում է նաև օտար լեզվի խմբի (խմբերի) ձևավորումը: Եթե Հաստատության բոլոր սովորողների կողմից ընտրվել է մեկ բնագիտական կամ մեկ օտար լեզու առարկա, ապա այդ առարկաների վերաբերյալ անհրաժեշտ գրանցումները կատարվում են դասարանի հիմնական դասամատյանում:

7) Սովորողների կողմից ընտրված բնագիտական առարկաների կամ օտար լեզուների ուսուցման կազմակերպման նպատակահարմարությունից ելնելով՝ անհրաժեշտ է ըստ առարկաների ձևավորված յուրաքանչյուր խմբին, անկախ սովորողների թվից, հատկացնել շաբաթական միևնույն քանակի դասաժամ:

8) Ուսումնական պլանով նախատեսված ոչ քննական առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են սովորողների առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականների հիման վրա՝ ուսումնական տարվա ուսումնական պարապմունքների վերջում.

ա. քննական առարկաների տարեկան գնահատականները նշանակվում են առաջին և երկրորդ կիսամյակների կիսամյակային գնահատականների միջին թվաբանականի հիման վրա: Երկրորդ կիսամյակի կիսամյակային գնահատականը հաշվարկվում է առաջին կիսամյակի համար սահմանված կիսամյակային գնահատականի ձևավորման կարգով,

բ. քննական յուրաքանչյուր առարկայից տրվում են ամփոփիչ ստուգման աշխատանքներ: Այդ աշխատանքները տրվում են կրկնվող թեմայի, ինչպես նաև մի քանի բովանդակային ամբողջություն կազմող քննական ծրագրային նյութերի ամփոփումից հետո,

գ. բանավոր հարցման, գործնական, թեմատիկ, կիսամյակային ամփոփիչ աշխատանքների գնահատականները լրացվում են դասամատյաններում:

20. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Հաստատություններում դասավանդվում է երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներից որևէ մեկը:

2) Հաստատության ընտրությամբ երրորդ օտար լեզու (բացի ռուսերենից և մյուս հիմնական օտար լեզվից) կարելի է դասավանդել դպրոցական բաղադրիչի ժամ՝ Նախարարության կողմից երաշխավորված ծրագրերի (շաբաթական 2 ժամ), ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում: 5-րդ դասարանում 3-րդ, 4-րդ և 6-րդ դասարանում 5-րդ և 6-րդ դասարանների ծրագրերը լրիվությամբ ուսուցանելու համար լրացուցիչ հատկացվում են մեկական ժամ՝ դպրոցական բաղադրիչից կամ խմբակային պարապմունքների համար նախատեսված ժամերից:

3) Նախարարության կողմից՝ Հաստատության մանկավարժական խորհրդի և Հաստատության ենթակայության լիազոր մարմնի առաջարկությունների հիման վրա կարող է փոխարինվել Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն այլ օտար լեզվով, ինչպես նաև որոշվել նոր հիմնադրված Հաստատությունում դասավանդվող երկրորդ օտար լեզուն:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

21. Հաստատության դասարանների միջին խտությունը սահմանվում է 25-30 սովորող՝ տարրական և միջին դպրոցի դասարանների համար, 20-25 սովորող՝ ավագ դպրոցի դասարանների համար՝ սանիտարական նորմերի պահպանմամբ, ընդ որում, սովորողների թիվը տարրական և միջին դպրոցների դասարաններում չի կարող գերազանցել 35-ը, իսկ ավագ դպրոցում՝ 30-ը: Հիմնադրի կողմից սահմանված խտությունից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել Հաստատության լրացուցիչ ֆինանսավորման միջոցների հաշվին՝ Հաստատության խորհրդի որոշմամբ:

22. Տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ) «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» առարկաների դասաժամերին կարելի է դասարանը բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 30 և ավելի է:

23. Միջին դպրոցում «Հայոց լեզու» (7-9-րդ դասարաններ), «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (5-9-րդ դասարաններ), «Ինֆորմատիկա» (6-9-րդ դասարաններ՝ համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների պարապմունքներին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 30 և ավելի է:

Դասարանը նույն կարգով կարող է կիսվել երկու խմբի նաև Նախարարության երաշխավորած «Գրաբար» (7-րդ կամ 8-րդ, 11-րդ դասարաններ) առարկայի պարապմունքների ժամանակ՝ դպրոցական բաղադրիչի ժամաքանակը այդ առարկային տրամադրելու դեպքում:

«Տեխնոլոգիա» առարկայի (5-7-րդ դասարաններ) պարապմունքներին դասարանը կիսվում է երկու խմբի՝տղաների և աղջիկների, եթե տվյալ դասարանի ընդհանուր աշակերտների թիվը 12 և ավելի է (ուսուցումը կազմակերպվում է յուրաքանչյուր խմբի համար հաստատված համապատասխան առարկայական ծրագրով):

24. 10-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների և ավագ դպրոցի արհեստագործական մասնագիտական դասընթացների դասաժամերին դասարանը կարելի է բաժանել երկու խմբի, եթե դասարանում սովորողների թիվը 30 և ավելի է:

25. Անհրաժեշտության դեպքում Հաստատությունն իրավասու է վերաբաշխելու առարկաների ուսուցմանը Ուսումնական պլանով հատկացված ժամերը՝ պահպանելով տվյալ առարկայի տարեկան ընդհանուր ժամաքանակը:

26. 8-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ.

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին.

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը.

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2016 թվականի հունվար-փետրվար ամիսներին.

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

27. 6-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Ինֆորմատիկա», «Քիմիա», «Ֆիզիկա», «Կենսաբանություն», «Հայոց պատմություն» և այլ առարկաների ծրագրերով ամսական առնվազն 1 ժամ ուսուցումը կազմակերպվում է համակարգչային կաբինետում (դրա առկայության դեպքում)՝ ելնելով յուրաքանչյուր առարկայից մատուցվող ուսումնական նյութի բովանդակային և դասավանդման մեթոդական պահանջներից: Այն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել «Հայկական կրթական միջավայրի պաշարների շտեմարանում» (http://lib.armedu.am) տեղադրված Նախարարության կողմից երաշխավորված էլեկտրոնային ուսումնական նյութերը:

28. 6-7-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներից մեկը Հաստատության ընտրությամբ դասավանդվում է առաջին, մյուսը՝ երկրորդ կիսամյակում:

29. «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաների համաժամանակյա թեմաների ուսուցումն ապահովելու նպատակով ուսուցիչներին իրավունք է տրվում մասնակի փոփոխություններ կատարելու նշված առարկաների դասացանկում՝ պահպանելով յուրաքանչյուր առարկային հատկացված տարեկան ընդհանուր ժամաքանակը:

30. Հաստատությունում, ըստ կրթական ծրագրերի աստիճանների, տարրական, միջին և ավագ դպրոցներում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների համար «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցումը կարող է իրականացվել «Հանրակրթական դպրոցի հատուկ բժշկական խմբերի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի 1-12-րդ դասարանների ծրագրով», Հաստատության խմբակների համար նախատեսված ժամաքանակի շրջանակում կամ տվյալ դասարանի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասաժամերին՝ անհատական ծրագրով: Հաստատությունում հատուկ բժշկական խմբերում ընդգրկված սովորողների գնահատում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայից չի կատարվում:

IV. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾՈՂ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ 2015 - 2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

31. Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագրեր իրականացնող առանձին գործող ավագ դպրոցի (այսուհետ՝ Ավագ դպրոց) Ուսումնական պլանները սահմանում են հոսքային ուսուցման ծրագրեր իրականացնող Ավագ դպրոցում միջնակարգ կրթության բովանդակության կառուցվածքը՝ ըստ տարբերակված հոսքերի, հանրակրթական ուսումնական առարկաներին հատկացվող շաբաթական ժամաքանակները՝ ըստ բաղադրիչների և սովորողների շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն չափը՝ ըստ դասարանների:

32. Ավագ դպրոցում երաշխավորվում են հոսքերի հետևյալ խմբերը՝

1) հիմնական-հումանիտար, բնագիտամաթեմատիկական, արհեստագործական.

2) ընդհանուր:

33. Ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների Ուսումնական պլանները ըստ հոսքերի տրված են.

1) հումանիտար հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի հումանիտար հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում.

2) բնագիտամաթեմատիկական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում.

3) արհեստագործական հոսքը՝ «Հանրակրթական ավագ դպրոցի արհեստագործական հոսքի 10-12-րդ դասարանների ուսումնական պլան»-ում.

4) ընդհանուր հոսքը՝ «Հաստատության ուսումնական պլան»-ում (համաձայն սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 1-ի):

34. Ուսումնական պարապմունքները Ավագ դպրոցում սկսվում են 2015 թվականի սեպտեմբերի 1-ին և ավարտվում 2016 թվականի մայիսի 27-ին՝ ապահովելով ոչ պակաս, քան 34 ուսումնական շաբաթ տասից տասներկուերորդ դասարանների համար:

35. Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչներն ուղղված են հանրակրթության պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ապահովմանը:

36. Ավագ դպրոցում գործում է գնահատման 10 միավորային սանդղակ: Ընթացիկ գնահատման ժամանակ կարող է կիրառվել նաև գնահատման այլ սանդղակ, որը բերվում է 10 միավորային գրանցման: Պետական ավարտական քննությունների ժամանակ կիրառվող գնահատման սանդղակները բերվում են 10 կամ 20 միավորային գրանցման:

37. Ավագ դպրոցում խմբային ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է:

38. Ուսումնական տարին բաժանվում է կիսամյակների: Սովորողների ընթացիկ գնահատականների հիման վրա ձևավորվում են կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատականների միջոցով՝ տարեկան գնահատականները՝ բացառությամբ սույն հրամանով հաստատված հավելվածի 44-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված դեպքի:

39. Ուսումնական տարվա ընթացքում 10-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2015 թվականի նոյեմբերի 2-ից նոյեմբերի 8-ը ներառյալ, ձմեռային՝ 2015 թվականի դեկտեմբերի 28-ից 2016 թվականի հունվարի 10-ը ներառյալ, գարնանային՝ 2016 թվականի մարտի 14-ից 20-ը ներառյալ:

40. Ավագ դպրոցի դասարանների միջին խտությունը սահմանվում է 20-25 սովորող (ընդ որում՝ սովորողների թիվը չի կարող գերազանցել 30-ը):

41. Հոսքային ուսուցման առարկաների դասերին դասարանի միջին խտությունը կարող է սահմանվել 12-15 սովորող՝ սանիտարական նորմերի պահպանմամբ:

42. Ավագ դպրոցի Ուսումնական պլանների ընդհանուր հանրակրթական բաղադրիչի «Հայոց լեզու», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու», «Ինֆորմատիկա» (համակարգչային դասարանի առկայության դեպքում) առարկաների և արհեստագործական մասնագիտական դասընթացների դասաժամերին դասարանը կարող է բաժանվել երկու խմբի, եթե տվյալ դասարանի սովորողների թիվը 20 և ավելի է:

43. Ավագ դպրոցի միևնույն դասարանում ընդհանուր հանրակրթական բաղադրիչի շրջանակում ուսումնասիրվող երկրորդ օտար լեզվի (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու) դասաժամին դասարանը կարող է բաժանվել խմբերի՝ անկախ սովորողների թվից, բայց ոչ ավելի, քան երեք օտար լեզվի (բացի ռուսերենից) համար:

44. Ուսումնական գործընթացի կազմակերպումը 12-րդ դասարանում.

1) 12-րդ դասարանում առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական բոլոր թեմաների ուսումնասիրությունն իրականացվում է առաջին կիսամյակում:

2) 12-րդ դասարանում Ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակը երկրորդ կիսամյակում հատկացվում է խմբային պարապմունքների միջոցով պետական քննական (ավարտական, միասնական) առարկաների ուսումնական ամբողջ նյութի կրկնությանը: Այդ նպատակով կազմվում է սովորողների խմբային ուսուցման ժամանակացույց:

3) Երկրորդ կիսամյակում քննական առարկաների (բացառությամբ «Ֆիզկուլտուրա» առարկայի) կրկնությանը հատկացված ժամաքանակը չի կարող պակաս լինել այդ առարկաներին առաջին կիսամյակում Ուսումնական պլանով հատկացված ժամաքանակից.

4) 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում յուրաքանչյուր դասարանի (խմբի) համար ուսուցումը պետք է իրականացվի խմբային եղանակով՝ յուրաքանչյուր սովորողի համար ապահովելով շաբաթական 34 դասաժամ:

5) Առաջին կիսամյակում համալրված դասարաններում երկրորդ կիսամյակում՝ «Հայոց լեզու և հայ գրականություն» («Հայոց լեզու», «Հայ գրականություն»), «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն»), «Հայոց պատմություն», «Ֆիզկուլտուրա» քննական առարկաների դասաժամերին սովորողների ուսումնառությունը շարունակվում է նույն համակազմով՝ որպես մեկ ուսումնական խումբ: Սովորողների ուսումնառության արդյունքները դասամատյանում գրանցվում են՝ ըստ Ուսումնական պլանի՝ 12-րդ դասարանի պետական պարտադիր առարկայացանկի:

6) Բնագիտական առարկայի(ների) դասաժամին տվյալ Հաստատության 12-րդ դասարանի(ների) բոլոր սովորողները խմբավորվում են՝ ըստ իրենց կողմից ընտրված բնագիտական առարկայի(ների): Նույն սկզբունքով կատարվում է նաև օտար լեզվի խմբի (խմբերի) ձևավորումը: Եթե Հաստատության բոլոր սովորողների կողմից ընտրվել է մեկ բնագիտական կամ մեկ օտար լեզու առարկա, ապա այդ առարկաների վերաբերյալ անհրաժեշտ գրանցումները կատարվում են դասարանի հիմնական դասամատյանում:

7) Սովորողների կողմից ընտրված բնագիտական առարկաների կամ օտար լեզուների ուսուցման կազմակերպման նպատակահարմարությունից ելնելով՝ անհրաժեշտ է ըստ առարկաների ձևավորված յուրաքանչյուր խմբին, անկախ սովորողների թվից, հատկացնել շաբաթական միևնույն քանակի դասաժամ:

8) Ուսումնական պլանով նախատեսված ոչ քննական առարկաներից տարեկան գնահատականները նշանակվում են սովորողների՝ առաջին կիսամյակի կիսամյակային գնահատականների հիման վրա՝ ուսումնական տարվա ուսումնական պարապմունքների վերջում.

ա. քննական առարկաների տարեկան գնահատականները նշանակվում են առաջին և երկրորդ կիսամյակների կիսամյակային գնահատականների միջին թվաբանականի հիման վրա: Երկրորդ կիսամյակի կիսամյակային գնահատականը հաշվարկվում է առաջին կիսամյակի համար սահմանված կիսամյակային գնահատականի ձևավորման կարգով,

բ. քննական յուրաքանչյուր առարկայից տրվում են ամփոփիչ ստուգման աշխատանքներ: Այդ աշխատանքները տրվում են կրկնվող թեմայի, ինչպես նաև մի քանի բովանդակային ամբողջություն կազմող քննական ծրագրային նյութերի ամփոփումից հետո,

գ. բանավոր հարցման, գործնական, թեմատիկ և կիսամյակային ամփոփիչ աշխատանքների գնահատականները լրացվում են դասամատյաններում:

45. Ուսումնական պլանների կառուցվածքը.

Հոսքային (խորացված) ուսուցման Ուսումնական պլանները կազմված են ընդհանուր հանրակրթական, հոսքային (արհեստագործական հոսքում՝ մասնագիտական) և դպրոցական բաղադրիչներից:

☞4

ՈՒՍՊԼԱՆ

3 1) Ընդհանուր հանրակրթական բաղադրիչը ներառում է հանրակրթական ուսումնական առարկան(երը) և յուրաքանչյուր առարկայի համար նախատեսված շաբաթական ժամաքանակները՝ ըստ դասարանների: Ընդհանուր հանրակրթական առարկաները պարտադիր են տվյալ հոսքի (ենթահոսքի) համար:

2) Հոսքային բաղադրիչով սահմանված ժամաքանակը տրամադրվում է խորացված ուսուցմամբ առարկաների դասավանդմանը, իսկ արհեստագործական հոսքում՝ մասնագիտական դասընթացներին: Հոսքային բաղադրիչում ընդգրկված առարկաները (դասընթացները) ուղղված են սովորողի հետագա մասնագիտական կրթության հիմքերի ստեղծմանը և հանրակրթությունից մասնագիտական կրթության անցման շարունակականության ապահովմանը, իսկ արհեստագործական հոսքի պարագայում՝ նախնական մասնագիտական կրթության որևէ որակավորման ձեռքբերմանը:

3) Դպրոցական բաղադրիչը հոսքային ուսուցման դեպքում ընդգրկում է հետագա մասնագիտական կրթության նախապատրաստմանն ուղղված ընտրովի առարկաները, դասընթացները և դրանց ուսուցման համար ըստ դասարանների նախատեսված ժամաքանակները: Այս բաղադրիչը տնօրինում է Հաստատությունը՝ ղեկավարվելով Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկով:

4) Հաստատությունը Ուսումնական պլանների հիման վրա ընդհանուր հանրակրթական, հոսքային, դպրոցական բաղադրիչների տնօրինմամբ մշակում է յուրաքանչյուր հոսքի՝ տվյալ ուստարվա ենթահոսքերի իր ուսումնական պլանները: Ենթահոսքերի ուսումնական պլանները կազմելիս Հաստատությունը ընդհանուր հանրակրթական և հոսքային բաղադրիչներով նախատեսված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը հատկացնում է դպրոցական բաղադրիչին:

5) Ընդհանուր հանրակրթական, հոսքային և դպրոցական բաղադրիչները ֆինանսավորվում են պետական բյուջեից:

6) 10-12-րդ դասարաններում դասարանի շաբաթական ուսումնական պարտադիր բեռնվածությունը բոլոր հոսքերում սահմանվում է 34 դասաժամ:

46. Դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգը հոսքային ուսուցմամբ դասարաններում.

1) Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը տրամադրվում է Նախարարության կողմից հաստատված լրացուցիչ առարկայացանկի, տվյալ հոսքային ուսուցմամբ դասարանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչի և հոսքային ուսուցման առարկաներին:

Ավագ դպրոցի խորացված ուսուցմամբ հոսքերի համար կարող են երաշխավորվել լրացուցիչ հետևյալ՝ «Գրաբար» (11-րդ դասարան), «Արտասահմանյան գրականություն» (11-րդ դասարան), «Բանահյուսություն» (հին և միջնադարյան շրջան, 11-րդ դասարան), «Ճարտասանություն» (11-րդ դասարան), «Արևմտահայերեն» (10-րդ կամ 11-րդ դասարան), «Պետության և իրավունքի հիմունքներ» (11-րդ դասարան), «Հայկական հարցի պատմություն» (11-րդ դասարան), «Հնագիտություն» (10-րդ դասարան), «Ազգագրություն» (10-րդ դասարան), «Լեռնային Ղարաբաղի հարակից երկրների պատմություն» (11-րդ դասարան), «Կրոնի պատմություն» (11-րդ դասարան), «Արվեստի պատմություն» (10-11-րդ դասարաններ), «Հայոց եկեղեցու պատմություն» (բնագիտամաթեմատիկական հոսք, 10-11-րդ դասարաններ), «Քրիստոնեական բարոյագիտություն» (12-րդ դասարան), «Բարոյագիտություն» (11-րդ դասարան), «Տրամաբանություն (11-րդ դասարան), «Թվային համակարգեր» (10-րդ դասարան), «Երկրաչափության հիմունքներ» (12-րդ դասարան), «Դիսկրետ մաթեմատիկայի տարրեր» (11-րդ դասարան), «Աստղագիտություն» (10-11-րդ դասարաններ), «Ռադիոէլեկտրոնիկա» (11-րդ դասարան), «Բնօգտագործման և բնապահպանության հիմունքներ» (10-11-րդ դասարաններ), «Կիրառական քիմիա» (11-րդ դասարան), «Գիտական ճանաչողության հիմունքներ» (11-րդ դասարան), «Բնական գիտությունները և մաթեմատիկան» (10-րդ դասարան), «Բնագիտական մտքի պատմություն» (11-րդ դասարան), «Երկրագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Քերականություն և բառագիտություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Գրականություն» (ուսումնասիրվող օտար լեզվով), «Մասնագիտական կողմնորոշում» (10-րդ կամ 11-րդ դասարան) առարկաների ուսուցումը՝ Հաստատության կողմից դրանց առարկայական ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո.

2) Հաստատությունը կարող է ներդնել նաև նոր առարկաներ (դասընթացներ)՝ դրանց ծրագրերը սահմանված կարգով Նախարարության կողմից հաստատվելուց հետո:

47. 10-11-րդ դասարաններում Նախարարության կողմից երաշխավորված ծրագրի և ուսումնական նյութերի հիման վրա դասավանդվում է «Առողջ ապրելակերպ» դասընթացը, որին յուրաքանչյուր դասարանում տարեկան տրամադրվում է 14 դասաժամ.

1) «Առողջ ապրելակերպ» դասընթացին տրամադրված ժամաքանակը ձևավորվում է «Ֆիզկուլտուրա» առարկայի տարեկան ժամաքանակից առանձնացված 14 դասաժամի հաշվին:

2) «Ֆիզկուլտուրա» առարկայի ծրագրով նախատեսված ուսումնական նյութերը ենթարկվում են թեմատիկ վերաբաշխման՝ պահպանելով տվյալ դասարանի համար Նախարարության հաստատած ծրագրային ամբողջ ծավալը:

3) «Առողջ ապրելակերպ» դասընթացը դասավանդվում է 2016 թ. հունվար-փետրվար ամիսներին:

4) «Առողջ ապրելակերպ» դասընթացի ընթացիկ գնահատում չի կատարվում: Դասամատյանում դասընթացի գրանցումները կատարվում են առանձին էջում:

48. Օտար լեզվի ընտրության կարգ.

1) Ավագ դպրոցում դասավանդվում է առնվազն երկու օտար լեզու, որոնցից մեկը ռուսերենն է, մյուսը՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ որևէ այլ լեզու.

2) Ավագ դպրոցի ընտրությամբ երրորդ (հիմնական և մյուս օտար լեզվից բացի) օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլն) կարելի է դասավանդել Նախարարության կողմից հաստատված համապատասխան առարկայական չափորոշիչներով և ծրագրերով (շաբաթական 2 ժամ), ուսումնական գրականության հիման վրա, ուսուցման համար անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում.

3) Ավագ դպրոցը դասավանդվող օտար լեզուն կարող է փոխարինել այլ օտար լեզվով՝ Նախարարության որոշմամբ: Նախարարությունը քննարկում է Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի առաջարկությունը օտար լեզվի փոխարինման վերաբերյալ և կայացնում համապատասխան որոշում.

4) նոր հիմնադրված Ավագ դպրոցում դասավանդվող երկրորդ օտար լեզուն Հաստատության մանկավարժական խորհրդի առաջարկությամբ որոշում է Նախարարությունը:

49. Սույն հրամանով հաստատված ենթահավելվածի աղյուսակների պարզաբանումներ.

1) Սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 2-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև չորս առարկա ներառյալ,

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»,

գ. «Օտար լեզու-1» և «Ռուսաց լեզու-1» առարկաներն ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու-2» առարկաները.

2) սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) ընտրում է որոշակի թվով առարկաներ՝ համաձայն՝ սույն ուսումնական պլանի 49-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության պարզաբանման: Այդ դեպքում սովորողը չի ուսումնասիրում Ուսումնական պլանի ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկաները.

3) հումանիտար հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին: Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հրամանով հաստատված հավելվածի 18-րդ կետի համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը:

4) Ավագ դպրոցի հումանիտար հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 2-ի)՝

ա. 10-րդ դասարանում բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրվում է հարակից առարկաների ծրագրով (շաբաթական 2 ժամ), իսկ մնացած երեք բնագիտական առարկաները, համապատասխանաբար, այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով,

բ. 11-րդ դասարանում հումանիտար հոսքի ենթահոսքերից յուրաքանչյուրի սովորողներն ընտրում են չորս բնագիտական առարկաներից երկուսը, ընդ որում՝ այդ առարկաներից մեկն ուսումնասիրվում է բնագիտական հոսքի հարակից առարկաների, իսկ մյուսը՝ հումանիտար հոսքի ծրագրով,

գ. 12-րդ դասարանում բնագիտական առարկայի ուսումնասիրությունը շարունակվում է 11-րդ դասարանում սովորողի ընտրած բնագիտական հոսքի հարակից առարկայի ծրագրով,

դ. 11-րդ դասարանում դպրոցական բաղադրիչում ձևավորված ժամաքանակից 0,5 ժամ կարող է հատկացվել «Հասարակագիտություն» առարկային՝ հանրակրթական դպրոցի ընդհանուր հոսքի համար նախատեսված ծրագրով ուսուցում կազմակերպելու նպատակով (համաձայն սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 1-ի).

5) Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 3-ի)՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ որպես խորացված ուսուցման առարկաներ՝ սովորողն ընտրում է բերված ցանկից մինչև երեք առարկա ներառյալ,

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը»,

գ. «3» նշագրումը նշանակում է, որ «Օտար լեզու-1» առարկան ընտրելու դեպքում սովորողը չի ուսումնասիրում «Օտար լեզու-2» առարկան.

6) սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 3-ում՝

ա. սովորողը խորացված ուսուցմամբ առարկայացանկից (հոսքային բաղադրիչ) առարկա(ներ) ընտրելու դեպքում չի ուսումնասիրում Ուսումնական պլանի Ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված միևնույն առարկա(երը),

բ. բնագիտամաթեմատիկական հոսքի որևէ ենթահոսքի առարկաների՝ հոսքային և ընդհանուր հանրակրթական բաղադրիչներով սահմանված ժամաքանակի բաշխումից հետո մնացած ժամաքանակը տրվում է Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին: Դպրոցական բաղադրիչի ժամաքանակը բաշխվում է սույն հրամանով հաստատված Հավելվածի 18-րդ կետի համաձայն՝ պահպանելով տվյալ դասարանի համար Ուսումնական պլանով սահմանված շաբաթական ժամաքանակը,

գ. եթե սովորողը խորացված ուսուցմամբ ընտրում է մեկ բնագիտական առարկա, ապա 10-րդ դասարանում ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված մնացած երեք բնագիտական առարկաներից մեկը՝ շաբաթական 2 ժամով, ուսումնասիրում է բնագիտական հոսքի հարակից («Աշխարհագրություն» առարկայի դեպքում՝ ընդհանուր) առարկայական ծրագրով, իսկ մյուս երկու բնագիտական առարկաները՝ այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով: 11-րդ դասարանում մեկ բնագիտական առարկայի խորացված ուսուցումը շարունակելու դեպքում մնացած երկու բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրում է այդ առարկայի՝ բնագիտական հոսքի հարակից առարկայական ծրագրով, իսկ մյուսը՝ այդ առարկայի՝ հումանիտար հոսքի ծրագրով: 12-րդ դասարանում մեկ բնագիտական առարկայի խորացված ուսուցումը շարունակելու դեպքում սովորողը կարող է շարունակել ևս մեկ բնագիտական առարկայի ուսումնասիրությունը՝ հարակից առարկայական ծրագրով,

դ. եթե սովորողը խորացված ուսուցմամբ ընտրում է երկու բնագիտական առարկա, ապա ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված բնագիտական առարկաներից մյուս երկուսը 10-րդ դասարանում ուսումնասիրում է այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով: 11-րդ դասարանում երկու բնագիտական առարկաների խորացված ուսուցումը շարունակելու դեպքում մնացած մեկ բնագիտական առարկան ուսումնասիրում է այդ առարկայի՝ հումանիտար հոսքի ծրագրով: 12-րդ դասարանում սովորողը շարունակում է միայն խորացված ուսուցմամբ երկու բնագիտական առարկաների ուսումնասիրությունը,

ե. եթե սովորողը չի ընտրում խորացված ուսուցմամբ որևէ բնագիտական առարկա, ապա 10-րդ դասարանում բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրում է այդ առարկայի՝ հարակից («Աշխարհագրություն» առարկայի դեպքում՝ ընդհանուր) առարկայական ծրագրով (10-րդ դասարանում՝ շաբաթական 2 ժամ), իսկ մնացած երեք բնագիտական առարկաները, համապատասխանաբար, այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով: 11-րդ դասարանում բնագիտական առարկաներից մեկը սովորողն ուսումնասիրում է բնագիտական հոսքի հարակից առարկայական ծրագրով, իսկ մյուս երկուսը՝ այդ առարկաների՝ հումանիտար հոսքի ծրագրերով: 12-րդ դասարանում սովորողը բնագիտական մեկ առարկայի ուսումնասիրությունը շարունակում է 11-րդ դասարանում բնագիտական հոսքի հարակից առարկայական ծրագրով ուսումնասիրած առարկան,

զ. 11-12-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկան ուսումնասիրվում է Ավագ դպրոցի հումանիտար և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար նախատեսված ծրագրով,

է. եթե սովորողը 12-րդ դասարանում չի ուսումնասիրում «Օտար լեզու-1» առարկան, ապա շարունակում է ընդհանուր հանրակրթական բաղադրիչում ընդգրկված «Օտար լեզու-2» և «Ռուսաց լեզու» առարկաների համապատասխան ծրագրերի ուսումնասիրությունը,

ը. «Համաշխարհային պատմություն» առարկան Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (համաձայն սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 3-ի).

7) սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 4-ում՝

ա. «1» նշագրումը նշանակում է, որ մասնագիտական դասընթացներ (առարկաներ) են համարվում դպրոցի կողմից իրականացվող նախամասնագիտական ուսումնական ծրագրերը,

բ. «2» նշագրումը նշանակում է, որ բնագիտական առարկաներ են համարվում «Ֆիզիկան», «Քիմիան», «Կենսաբանությունը» և «Աշխարհագրությունը».

8) Ավագ դպրոցի արհեստագործական հոսքի Ուսումնական պլանով (համաձայն սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 4-ի)՝

ա. 10-րդ դասարանում բնագիտական առարկաներից մեկն ուսումնասիրվում է բնագիտական հոսքի՝ հարակից («Աշխարհագրություն» առարկայի դեպքում՝ ընդհանուր) առարկաների ծրագրերով (շաբաթական 2 ժամ), իսկ մնացած երեք բնագիտական առարկաները, համապատասխանաբար, այդ առարկաների՝ հումանիտար հոսքի համար նախատեսված ծրագրերով,

բ. 11-րդ դասարանում սովորողներն ընտրում են չորս բնագիտական առարկաներից երկուսը, ընդ որում՝ այդ առարկաներից մեկն ուսումնասիրվում է բնագիտական հոսքի՝ հարակից առարկաների ծրագրով, իսկ մյուսը՝ հումանիտար հոսքի համար նախատեսված ծրագրով,

գ. 12-րդ դասարանում բնագիտական առարկայի ուսուցումը շարունակվում է 11-րդ դասարանում սովորողների ընտրած՝ բնագիտական հոսքի հարակից առարկայի ծրագրով,

դ. մասնագիտական դասընթացների ժամաքանակը ներառում է նաև պրակտիկ ուսուցման ժամերը: Ուսումնական պլանով 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակի ժամաքանակը Հաստատության մանկավարժական խորհրդի որոշմամբ հատկացվում է ուսումնական պրակտիկայի կազմակերպմանը և պետական ավարտական քննական առարկաների կրկնությանը,

ե. «Համաշխարհային պատմություն» առարկան Ավագ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ կարող է ընդգրկվել ընդհանուր հանրակրթական բաղադրիչի առարկայացանկում և ուսումնասիրվել առարկայի՝ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար երաշխավորված ծրագրով (համաձայն Աղյուսակ 4-ի).

9) ռուսերենով ուսուցմամբ միջնակարգ հանրակրթական դպրոցի (դասարանի) Ուսումնական պլանի (համաձայն սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 6-ի)՝ «Մայրենի» առարկայի դասաժամերը 1-ին դասարանի 1-ին կիսամյակում հատկացվում են բանավոր խոսքի զարգացմանը, 2-րդ կիսամյակում՝ տառուսուցմանը.

10) տնային և հիվանդանոցային պայմաններում երկարատև բուժվող երեխաների անհատական ուսուցման Ուսումնական պլանով (համաձայն սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 7-ի)՝

ա. ռուսերենով ուսուցման դեպքում ռուսաց լեզվին տրվում են հայերենի համար հատկացված դասաժամերը՝ ապահովելով նույն ժամաքանակի սահմաններում նաև ռուս գրականության ուսուցումը, իսկ ռուսերենի համար նախատեսված ժամաքանակը տրվում է հայոց լեզվի ուսուցմանը,

բ. տնային պայմաններում ուսուցում կազմակերպվում է բնակավայրը սպասարկող բուժհիմնարկի փաստաթղթերի հիման վրա (եթե բուժման ընթացքը տնային պայմաններում շարունակվելու է մեկ ամսից ավելի)՝ ըստ Հաստատության ենթակայության՝ համապատասխան Լիազորված մարմնի գիտությամբ,

գ. տնային պայմաններում ուսուցման կազմակերպումն իրականացնում է այն Հաստատությունը, որտեղ հաշվառված է սովորողը,

դ. տնային պայմաններում ուսուցում կազմակերպող ուսուցիչները վճարվում են դրույքաչափով, եթե ուսուցումը նախատեսվում է ամբողջ ուստարվա համար, մնացած դեպքերում՝ ժամավճարով,

ե. հիվանդանոցներում երկարատև բուժվող երեխաների ուսուցումը կազմակերպվում է՝ ըստ դասարանների՝ վերոնշյալ կարգի պահպանմամբ, տվյալ բուժհաստատությունը սպասարկող ուսումնական Հաստատության կողմից (համաձայն սույն հրամանով հաստատված ենթահավելվածի Աղյուսակ 7-ի):

ՈՒՍՊԼԱՆ

Ենթահավելված
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2015 թվականի հունիսի 11-ի N 119/ Ն հրամանի

Աղյուսակ 1
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	7	8	8	8	7	6	-	-	-	-	-	-
Հայոց լեզու	-	-	-	-	-	-	3	2	2	2	2	2
Գրականություն	-	-	-	-	-	-	2	3	3	-	-	-
Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-	-	3	3	3
Ռուսաց լեզու	-	2	2	3	3	3	3	3	3	2	2	2
Օտար լեզու	-	-	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	-	-	-	-	-	-
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	-	-	-	-	-
Ես և շրջակա աշխարհը	-	1	1	2	-	-	-	-	-	-	-	-
Հայրենագիտություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	-	-
Բնագիտություն	-	-	-	-	2	2	-	-	-	-	-	-
Աշխարհագրություն	-	-	-	-	-	1	1	2	-	2	1	1
Հայաստանի աշխարհագրություն	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-
Հայոց պատմություն	-	-	-	-	-	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմ.	-	-	-	-	-	1	1	1	1	2	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	-	-	-	-	1	1	1	1	1	1	1	-
Հասարակագիտություն	-	-	-	-	-	-	-	1	1	2	2	2
Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	-	-	-	-	-	-	2	2	2	1.5	1.5	1.5
Ինֆորմատիկա	-	-	-	-	-	1	1	1	1	1	1	1
Ֆիզիկա	-	-	-	-	-	-	2	2	2	3	3	3
Քիմիա	-	-	-	-	-	-	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	-	-	-	-	-	-	2	2	2	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	-	-	-	-	-
ՆՁՊ	-	-	-	-	-	-	-	1	1	1	1	-
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	-	2	2	2	-	-	-	-	-	-	-	-
Դպրոցական բաղադրիչ	-	1	2	2	2	2.5	2.5	2.5	2.5	-	2	6.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 2
ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ
X-XII ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Առարկայական ոլորտներ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցման առարկաներ [1]	Հայոց լեզու-1	2	2	3
	Հայ գրականություն-1	3	4	5
	Հայոց պատմություն-1	3	5	8
	Համաշխ. պատմություն-1	3	5	8
	Օտար լեզու-1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	3	3
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	3	3
	Հայոց պատմություն	2	2	2
	Համաշխ. պատմություն	2	1	1
	Հասարակագիտություն	2	1.5	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու-2	2	2	2
	Հայոց եկեղեցու պատմություն	1	1	–
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	–
	Բնագիտական առարկա [2]	1	–	–
	Բնագիտական առարկա [2]	1	–	–
	Ինֆորմատիկա	1	1	–
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆՁՊ	1	1	–
	Դպրոցական բաղադրիչ			
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 3
ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Առարկայական ոլորտներ	Առարկա	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Խորացված ուսուցման առարկաներ [1]	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն) -1	7	8	8
	Ֆիզիկա – 1	4	5	8
	Քիմիա – 1	4	5	8
	Կենսաբանություն -1	4	5	8
	Աշխարհագրություն -1	3	5	8
	Ռուսաց լեզու-1 (Ռուսաց լեզու, Ռուս գրականություն)	3	3	3
	Օտար լեզու -1[3]	3	5	8
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Հասարակագիտություն	2	1,5	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	5	5	5
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	–
	Բնագիտական առարկա [2]	1	1	–
	Բնագիտական առարկա [2]	1	–	–
	Ինֆորմատիկա	1	2	1
	Օտար լեզու-2	2	2	2
	Ռուսաց լեզու	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆՁՊ	1	1	–
	Դպրոցական բաղադրիչ			
Ընդամենը		34	34	34

Աղյուսակ 4
ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ X-XII

Առարկայական ոլորտներ	Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը		
		X	XI	XII
	Հոսքային բաղադրիչ			
Ասամբլեայական դասընթացներ [1]		9	13	16.5
	Ընդհանուր հանրակրթական բաղադրիչ			
Ընդհանուր հանրակրթական առարկաներ	Հայոց լեզու	2	2	2
	Հայ գրականություն	2	2	2
	Հայոց պատմություն	2	2	2
	Օտար լեզու	2	2	2
	Ռուսաց լեզու	2	2	2
	Հասարակագիտություն	2	1	1
	Մաթեմատիկա (Հանրահաշիվ և մաթ. անալիզի տարրեր, Երկրաչափություն)	3	3	3
	Բնագիտական առարկա [2]	2	1	1
	Բնագիտական առարկա [2]	1	1	–
	Բնագիտական առարկա [2]	1	–	–
	Բնագիտական առարկա [2]	1	–	–
	Ինֆորմատիկա և ՏՀՏ	1	1	1
	Ֆիզկուլտուրա	3	3	1.5
	ՆՁՊ	1	1	–
	Դպրոցական բաղադրիչ			

Աղյուսակ 5
ՌՈՒՍԵՐԵՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ I - IX ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը								
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX
Մայրենի	7	8	8	8	7	6	–	–	–
Հայոց լեզու	–	–	–	–	–	–	3	2	2
Գրականություն	–	–	–	–	–	–	2	3	3
Ռուսաց լեզու	–	3	4	4	4	4	4	4	4
Օտար լեզու	–	–	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	4	4	5	5	–	–	–
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	–	–
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	–	–
Ես և շրջակա աշխարհը	–	1	1	2	–	–	–	–	–
Բնագիտություն	–	–	–	–	2	2	–	–	–
Աշխարհագրություն	–	–	–	–	–	1	1	2	–
Հայաստանի աշխարհագրություն	–	–	–	–	–	–	–	–	2
Համաշխարհային պատմություն	–	–	–	–	–	1	1	1	1
Հայոց պատմություն	–	–	–	–	–	1.5	1.5	1.5	1.5
Հայոց եկեղեցու պատմություն	–	–	–	–	1	1	1	1	1
Հայրենագիտություն	–	–	–	–	1	–	–	–	–
Հասարակագիտություն	–	–	–	–	–	–	–	1	1
Հանրահաշիվ	–	–	–	–	–	–	3	3	3
Երկրաչափություն	–	–	–	–	–	–	2	2	2
Ինֆորմատիկա	–	–	–	–	–	1	1	1	1
Ֆիզիկա	–	–	–	–	–	–	2	2	2
Քիմիա	–	–	–	–	–	–	1	2	2
Կենսաբանություն	–	–	–	–	–	–	2	2	2
Տեխնոլոգիա	2	2	1	1	1	1	2	–	–
ՆՁՊ	–	–	–	–	–	–	–	1	1
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3
Շախմատ	–	2	2	2	–	–	–	–	–
Դպրոցական բաղադրիչ	–	–	–	1	1	1.5	1.5	1.5	1.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35

ԱՂՅՈՒՍԱԿ 6
ՌՈՒՍԵՐԵՆՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ (ԴԱՍԱՐԱՆԻ)

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Ռուսաց լեզու	4	8	6	8	6	3	3	3	2.5	3	3	3
Ռուս գրականություն	–	–	–	–	–	2	2	2	2	3	3	3
Մայրենի	3	3	5	4	6	5	–	–	–	–	–	–
Հայոց լեզու	–	–	–	–	–	–	3	2	2	2	2	2
Գրականություն	–	–	–	–	–	–	2	3	3	–	–	–
Հայ գրականություն	–	–	–	–	–	–	–	–	–	2	2	2
Օտար լեզու	–	–	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մաթեմատիկա	4	4	5	4	5	5	–	–	–	–	–	–
Հանրահաշիվ	–	–	–	–	–	–	3	3	3	2.5	2.5	2.5
Երկրաչափություն	–	–	–	–	–	–	2	2	2	1.5	1.5	1.5
Ես և շրջակա աշխարհը	–	1	1	2	–	–	–	–	–	–	–	–
Բնագիտություն	–	–	–	–	2	2	–	–	–	–	–	–
Երաժշտություն	2	1	1	1	1	0.5	0.5	–	–	–	–	–
Տեխնոլոգիա	2	1	1	1	1	1	2	–	–	–	–	–
Կերպարվեստ	2	1	1	1	1	0.5	0.5	–	–	–	–	–
Լեռնային Դաղստանի աշխարհ.	–	–	–	–	–	–	–	–	2	–	–	–
Աշխարհագրություն	–	–	–	–	–	1	1	2	–	1.5	1	1
Հայրենագիտություն	–	–	–	–	1	–	–	–	–	–	–	–
Հայոց պատմություն	–	–	–	–	–	1.5	1.5	1.5	1.5	2	2	2
Համաշխարհային պատմություն	–	–	–	–	–	1	1	1	1	1.5	1	1
Հայոց եկեղեցու պատմ.	–	–	–	–	1	1	1	1	1	–	–	–
Հասարակագիտություն	–	–	–	–	–	–	–	1	1	1	1.5	2
Ֆիզիկա	–	–	–	–	–	–	2	2	2	3	3	3
Քիմիա	–	–	–	–	–	–	1	2	2	2	2	1
Կենսաբանություն	–	–	–	–	–	–	2	2	2	2	2	2
Ինֆորմատիկա	–	–	–	–	–	1	1	1	1	1	1	1
ՆՁՊ	–	–	–	–	–	–	–	1	1	1	1	–
Ֆիզկուլտուրա	3	2	2	2	3	3	3	3	3	3	3	1.5
Շախմատ	–	2	2	2	–	–	–	–	–	–	–	–
Դպրոցական բաղադրիչ	–	1	–	1	–	1.5	0.5	0.5	1	–	0.5	3.5
Ընդամենը	20	24	26	28	29	31	34	35	35	34	34	34

Աղյուսակ 7
ՏՆԱՅԻՆ ԵՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ԲՈՒԺՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսումնական առարկաներ	Շաբաթական ժամերի քանակը											
	Տարրական դպրոց				Միջին դպրոց				Ավագ դպրոց			
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Մայրենի	5	4.5	4.5	4.5	4.5	4	–	–	–	–	–	–
Հայոց լեզու և գրակ.	–	–	–	–	–	–	3.5	2.5	3	2.5	2	2
Ռուսաց լեզու	–	1	1	1	1	1	1	1	1	1	1	1
Օտար լեզու	–	–	1	1	1	1	1	1	1	1	1	1
Ես և շրջակա աշխարհը	–	0.5	0.5	0.5	–	–	–	–	–	–	–	–
Մաթեմատիկա	2	3	2	2	2	2	2	3	2.5	2.5	2	2
Հայոց պատմություն	–	–	–	–	–	0.5	1	0.5	0.5	0.5	0.5	0.5
Համաշխարհային պատմություն	–	–	–	–	–	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Հասարակագիտություն	–	–	–	–	–	–	–	0,5	0,5	0.5	0.5	0.5
Ֆիզիկա	–	–	–	–	–	–	0.5	0.5	0.5	1	1	1
Քիմիա	–	–	–	–	–	–	0.5	0,5	0.5	0.5	0.5	0.5
Բնագիտություն	–	–	–	–	0.5	0.5	–	–	–	–	–	–
Կենսաբանություն	–	–	–	–	–	–	0.5	0,5	0.5	0.5	0.5	0.5
Աշխարհագրություն	–	–	–	–	–	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5
Ընդամենը	7	9	9	9	9	10	11	11	11	11	10	10

ԾՆՈՒՆԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ

ՍԻՐՈՎ, ՄԵՂՄ ՈՒ ԲԱՐԻ ԺՊԻՏՈՎ

Մի երկու շաբաթ առաջ՝ հունիսի 6-ին, տվել է հերթական թողարկումը: Աշխույժ ու կենսուրախ 24 երեխաներ, բավականին բարձր նիշերով հանձնելով մայրենիի ու մաթեմատիկայի քննությունները, ավարտել են 4-րդ դասարանը: Ասել կուզի՝ եկող տարի, սեպտեմբերին, ամեն-ամեն ինչ նորից պիտի սկսի սկզբից: Երևի կռահեցիք: Այո՛, այո՛, խոսքը տարրականի ուսուցչուհու մասին է, տվյալ դեպքում՝ Գրետա Ազիզյանի:

Ծնվել է 1955-ին, Ստեփանակերտում: Ավարտել է քաղաքի 7-րդ դպրոցը ու այսօր էլ հիացմունքով է խոսում իր առաջին դասարանի ուսուցչուհու՝ Ասյա Հայրապետյանի և, ընդհանրապես, իրեն դասավանդած մանկավարժների՝ Սոնյա Խասապետյանի, Բահատուր Դավթյանի, Գաբրիել Գաբրիելյանի, մյուսների մասին:

-Ասես ծնվել էին հենց դպրոցի համար, դաս տալու համար,-ասում է:

Տասներորդն ավարտելուց հետո գնացել է Բաքու, ընդունվել Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի «Մեթոդիկա և տարրական բաժին» մասնագիտության ֆակուլտետ, բայց մի օր անգամ դասի չի գնացել: Իր «բախտից» փակել են հայկական բաժինը, ու նա «դարձել է տուն», սովորել Ստեփանակերտի նորաբաց ինստիտուտում: Այստեղ ամեն ինչ լավ էր, հետաքրքիր: 77-ին ավարտել ու ինչ-ինչ հանգամանքներից դրդված (ամուսնացել էր), վերստին հայտնվել է «ինտերնացիոնալ» քաղաքում՝ Բաքվում: Աշխատում էր «Գրական Ադրբեջանում»՝ որպես տեխնիկական խմբագիր: Անցնում են ամիսներ, ոչինչ չասող, ոչինչ չխոստացող մի քանի տարիներ, ու Արցախում սկսված ազգային-ազատագրական շարժման հուժկու ալիքը իր գիրկն է առնում նաև Ազիզյան ամուսիններին: Մտածելու ժամանակ չկար: Բռնում են Ստեփանակերտ բերող ճանապարհը: Մնացականը աշխատում է հեռուստատեսությունում, ինքը՝ տարբեր հիմնարկություններում: Մինչև 88-ի վերջերը: 90-ի հոկտեմբերին Վարպետի անունը կրող հիմնական դպրոցում (թիվ 10) տեղ է բացվում, ու նրան վերջապես բախտ է վիճակվում ձեռքն առնել այնքա՜ն երազելի ու այնքա՜ն անհասանելի դասամատյանը ու մտնել դասարան: Այդ օրվանից էլ սկսում է հյուսել իր մանկավարժական գործունեության՝ մեկը մյուսից պայծառ էջերը:

Ու այսպես՝ 26 տարի, քառորդ դարից փոքր-ինչ ավելի: Ասել է թե՝ 26 տարի շարունակ նրա մայրական հոգատար ձեռքերի տակ կրթվել, դաստիարակվել են ժիր ու կայտառ բազում սերունդներ, որոնք այսօր երախտագիտությամբ են հիշում իրենց սիրելի դասվարին: Ու սա ամենևին էլ զարմանալի չէ: Կյանքը շռայլ է եղել նրա հանդեպ և օժտել է նրան մարդկային բարձր որակներով:

Ամենակարևորը. սիրել ու սիրում է իր գործը (փակագծերում ասենք, որ մանկավարժությունը նա միշտ համարել է ոչ թե զուտ մասնագիտություն, այլ բարձր ու վսեմ կոչում), այնքա՜ն ուշիմ ու խելոք, այնքա՜ն շարժուն ու չարաճճի սաներին, մանուկներին:

Հենց այս սերն է, որ նրան ոգևորել, ուժ ու եռանդ է պարգևել և մղել նոր որոնումների, նոր ձեռքբերումների, բաղձալի արդյունքների՝ ուսման ու դաստիարակության ոլորտում:

Զրուցում ես հետը ու հանգում այն մտքին, որ դպրոց մտնելու առաջին իսկ օրերից իր առջև դրված կարևորագույն խնդիրը նա համարել է երկրի համար արժանավոր քաղաքացիներ պատրաստելը, լավը, ուսանելին արմատավորելը, բարոյականը հոգևորի հետ զուգակցելը, ազնիվ գաղափարներ սերմանելը: Այսպիսին է նա, 60-ը արդեն բոլորած Գրետա Ազիզյանը, որն իր առաքելությունը տեսնում է հայ դպրությունը զարգացնելու ու երեխաներին հայեցի դաստիարակություն տալու մեջ: Ուրախալին այն է, որ նա ապրում է ոչ միայն իր դասարանի (4-րդ «ա»), այլ ողջ դպրոցի հոգսերով ու ձեռքբերումներով, նվաճումներով ու լուծման կարոտ խնդիրներով:

Հարցրեք ում ուզում եք ու, համոզված եմ, նույն խոսքը կլսեք.

-Նա մեր լավագույն դասվարներից մեկն է, ու նորերը շատ բան ունեն սովորելու նրանից:

Իրոք, տիկին Ազիզյանի փորձը արժանի է ուշադրության ու գնահատանքի: Նա կարողանում է կազմակերպել յուրօրինակ մեթոդներով հագեցած գեղեցիկ դասեր, որոնք երկա՜ր, շա՜տ երկար ժամանակ մնում են ոչ միայն սաների, այլև մեծերի, բոլոր ներկաների հիշողության մեջ:

Ու սա՝ մայրենիից, մաթեմատիկայից, երգ-երաժշտությունից, մյուս առարկաներից: Ուշագրավն այն է, որ հարուստ գիտելիքների հետ միասին տալիս է նաև արժանապատվության դասեր:

Չմոռանանք ասել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կազմակերպած «Կենգուրու», «Մեղու», «Ռուսական արջուկ» մրցույթ-խաղերում նրա դասարանից մի քանիսը (Արտյոմ Ջահանգիրյան, Մարինե Ջահանգիրյան, Վիլենա Գասպարյան ու էլի ուրիշներ) արժանացել են մրցանակների, գովեստի, դրվատանքի խոսքերի: Համաձայնեք, սա հենց այնպես չի ստացվել: Այս մրցանակների ետևում պիտի տեսնել ամենօրյա հետևողական աշխատանք, ուժերի լարում, գիտելիքների պաշար, իմացություն: Ուշագրավ մի փաստ ևս. մոտավոր հաշվումներով՝ նա տվել է շուրջ 220 շրջանավարտ, որոնցից շատերը հիմա գիտության, կրթության, արվեստի, արդարադատության ոլորտներում ճանաչված մարդիկ են, կայացած մասնագետներ:

Հիրավի, դրական շատ բան կարելի է ասել տիկին Ազիզյանի պարտաճանաչության, հոգատարության ու սրտացավության, դիմացինի նկատմամբ ունեցած կիրթ ու քաղաքավարի վերաբերմունքի մասին: Հիշեցնենք, որ Արցախյան գոյամարտի հերոս նահատակներից մեկի՝ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ Մարատ Ավանեսյանի անունը կրող նրա դասարանը անցած ուսումնական տարում «Դպրոցի արտաքին և ներքին տեսքի ամանօրյա ձևավորում 2014-2015» մրցույթում գրավել է առաջին տեղը և արժանացել տնօրինության պատվոգրին: Սրանում, իհարկե, իր ներդրումը, իր բաժինն է ունեցել կոլեկտիվի, ծնողների ու աշակերտների կողմից սիրված ու հարգված դասվարը, որը եղել է տասնյակ ու տասնյակ մանուկների առաջին քայլերի ուղեկիցն ու շունչ տվողը, նրանց վարժ կարդալ (ականավոր մանկավարժի՝ Սուխոմլինսկու բառերը հիշենք. «Ընթերցանությունը երեխայի համար պիտի դառնա գիտելիքներ ձեռք բերելու և հոգևոր կյանքը հարստացնելու աղբյուր»), խոսել ու մտածել սովորեցնողը, արվեստի մնայուն կոթողների, մեր ազգային ավանդույթներին, հեքիաթի, գեղեցիկի, մասնավորապես՝ գրքի նկատմամբ նրանց հոգիներում սիրո ու հարգանքի զգացում պատվաստողը, արթնացնողը: Ու այս ամենը արել է սիրով, մեղմ ու բարի ժպիտով՝ առանց հոգնելու, առանց տրտնջալու:

Վերջում մի առանձին գոհունակությամբ շեշտենք, որ տիկին Գրետան նաև լավ մայր է, ինը թոռների քաղցրիկ տատիկ, որը, չնայած առաջացած տարիքին, դեռ ասելիք և անելիք ունի տա՛նը, դրսո՛ւմ, խոհանոցո՛ւմ ու դպրոցո՛ւմ: Ու մի բան էլ. ուզում եմ հատուկ ընդգծել, որ ամուսնու՝ «Ազատ Արցախ» թերթի պատասխանատու քարտուղար Մնացական Ազիզյանի հետ նա մեծացրել, բարձր ուսման է տվել երեք սիրասուն զավակների (Անի, Արտակ, Գայանե), որոնք ամենուր աչքի են ընկնում իրենց վարք ու բարքով, մարդկանց ինչ-որ չափով օգտակար լինելու անկեղծ ցանկությամբ ու բարի կամքով:

Դե ի՞նչ: Շնորհավորենք հարգարժան տիկնոջը՝ հոբելյանի առթիվ, ցանկանանք նրան անսպառ ուժ ու եռանդ, տոկունություն, ընտանեկան ջերմություն, արևշատություն և, բնական է, նորանոր հաջողություններ՝ սաների կրթության ու դաստիարակության գործում:

Միքայել ԲԱԼՅԱՆ
Թոշակառու ուսուցիչ

ՆՎԻՐՈՒՄՈՎ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ

Վաստակաշատ մանկավարժ Վերա Սուլեյմանյանը 60 տարեկան է: Եռանդուն, մշտազբաղ, համեստ, լավ մանկավարժի համբավ ունի:

Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: 1978թ. դեկտեմբերին աշխատանքի է անցել Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հ.7 միջնակարգ դպրոցում՝ որպես ավագ ջոկատավար: Նրա բարեխիղճ աշխատանքը գնահատվել է կոմերիտմիության քաղաքային բաժնի կողմից և խրախուսվել մի շարք պատվոգրերով:

1987թ. նույն դպրոցում աշխատանքի է անցնում որպես դաստիարակ: 1989թ.-ից առայսօր աշխատում է որպես դասվար: Դասվարությանը զուգահեռ Վերա Սուլեյմանյանը 2011- 2013թթ. աշխատել է որպես տարրական մասնախմբի մեթոդիավորման նախագահ:

2013 թվականից համատեղության կարգով զբաղեցնում է նախադպրոցական խմբերի բաժանմունքի վարիչի պաշտոնը:

Տարիներ շարունակ սիրով բացել է դասարանի դուռը, և նրան դիմավորել են սպասումով լի մանկական հայացքները: Ոտքերը թռել են աննկատ, տարել երեխաներին դեպի նորն ու անծանոթը: Կենսագրությունը կերտվել է իր սաների կենսագրության մեջ, դարձել հարուստ ու բովանդակալից: Եվ ինչքան առաջ են գնացել տարիները, այնքան իմաստնացել, հմուտ է դարձել մանկավարժը, իր մեջ կուտակել լույսի մի ամբողջ ծով:

Աշխատանքային բեղուն գործունեության ընթացքում ուժ ու եռանդ չի խնայում, նվիրումով ու պատասխանատվությամբ է կատարում իր առաքելությունը:

Նա միշտ վաստակել ու շարունակում է վաստակել թե՛ ծնողների, թե՛ աշակերտների և թե՛ գործընկերների սերն ու հարգանքը:

Լավ մանկավարժ է, լավ գործընկեր, սիրասուն մայր, հոգատար տատիկ:

Ուրեմն, մեր սիրելի գործընկեր, շարունակիր նույն եռանդով կրթել ու դաստիարակել քո սաներին:

Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հ.7 հիմնական դպրոցի կոլեկտիվը ջերմորեն շնորհավորում է հոբելյարին, ցանկանում առողջություն, ուժ ու կորով իր աշխատանքային հետագա տարիների ընթացքում:

Ստեփ. Ե. Չարենցի անվան հ. 7 հիմն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՃԱԿԱՏԱԳՐՈՎ՝ ՈՒՍՈՒՑԻՉ

Ուսուցիչ դառնալը մի բան է, լինելը՝ մի այլ բան: Ուսուցիչ լինելը մեծ պատիվ է, քանզի ուսուցիչ է մեր Տեր Աստված Քրիստոսը: Ուրեմն՝ ուսուցչությունը աստվածային շնորհ է: Այդպիսի շնորհով է օժտված Քարահունջի հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Զվարթ Հայրապետյանը: Էությամբ մանկավարժ, ճակատագրով ուսուցիչ, մեր լավ գործընկերը անսահման սեր ու պատկառանք է տածում իր աշխատանքի նկատմամբ և իր բարի խորհուրդներով միշտ օգնում է սկսնակ մանկավարժներին: Ըստ նրա՝ ուսուցչությունը հաճելի ու վերուստ տրված մի աշխատանք է, որ ավելի շատ հեքիաթի է նման: Նրա կարծիքով՝ մանկավարժի վարպետությունն ու ստեղծագործական աշխատանքը ոչ թե ինտուիտիվ հատկանիշ են, այլ համառ ու հետևողական աշխատանքի արդյունք: Նա իր մանկավարժական տարիների հեռվից նայում է իր սաներին, ու հպարտությունն է պարուրում հոգին. չէ՞ որ նրանց ամեն մեկի հաջողությունը նաև իրենն է:

Զվարթ Հայրապետյանը ծնվել է 1955թ. հունիսի 29-ին Մարտունու շրջանի Աշան գյուղում:

1962-1972 թթ. սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: Ավարտելուց հետո ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժինը:

1977թ. աշխատանքի է անցել Մարտունու շրջանի Քերթի միջնակարգ դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

1989թ. օգոստոսի 15-ից տեղափոխվել և նշանակվել է Քարահունջի նորաբաց դպրոցի տնօրեն: 1999-2009թթ. աշխատել է փոխտնօրենի պաշտոնում: Առայսօր աշխատում է դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Քարահունջի մանկավարժական կոլեկտիվը միշտ հպարտացել է նման գործընկեր ունենալու համար:

Շնորհավոր 60-ամյա հոբելյանդ, սիրելի՛ գործընկեր, մեր լավ ընկեր, մեր բարի խորհրդատու, ցանկանում ենք Քեզ առողջություն, երջանկություն և անափ հաջողություններ:

Քարահունջի հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԲԱՐՈՒ ԱՆԽՈՆՋ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

Լրացավ վաստակաշատ մանկավարժ Ռիտա Գրիգորյանի ծննդյան 50 տարին:

Ազնվագույն մարդ, որի կոչումն է՝ ուսուցիչ:

Նրա կյանքը համակ նվիրաբերում է ընտրած մասնագիտությանը, սեր ու գորովանք սիրելի սաներին, ընկերներին, ընտանիքին և գյուղին:

Ռիտա Գրիգորյանին կարելի է համարել մատաղ հոգիների հմուտ դարբին և բարի գործերի անխոնջ սերմնացան:

Ծնվել է 1965թ. հունիսի 22-ին Մարտունու շրջանի Ավդուռ գյուղում՝ մտավորականի ընտանիքում: Դեռ փոքրուց երևում էր երևակայական մտածողությամբ, ամեն մի գործում լավը տեսնելու մեծ ընդունակությամբ: Ճիշտ է ասված՝ մանկավարժ ծնվում են, իսկ սովորելու տարիներն օգնում են միայն, որ նրա հոգում անթեղված «ուսուցիչը» ծլարձակի ու դառնա մի լուսաշող աստղ մանուկների համար:

1982թ. ավարտելով Մարտունու միջնակարգը՝ ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը:

Ավարտելով լրիվ դասընթացը՝ 1986թ., որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, աշխատանքի է անցել Մյուրիշենի 8-ամյա դպրոցում:

1987թ. աշխատանքի է ընդունվել Ավդուռի 8-ամյա դպրոցում:

1992-1994թթ. աշխատել է Շուշիի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:

1994թ. սեպտեմբերից, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, ընդունվել է աշխատանքի Ավդուռի 8-ամյա դպրոցում:

1999թ. ապրիլի 9-ից նշանակվել է նույն դպրոցի տնօրեն և առայսօր աշխատում է այդտեղ:

Ամուսնացած է, ունի երեք երեխա:

Նրանից միշտ գոհ են թե՛ ղեկավարներն ու գործընկերները, թե՛ ծնողներն ու սաները, թե՛ համագյուղացիները:

Նրա բարի խոսքն ու խորհուրդը բալասան են յուրաքանչյուրիս:

Այսօր մեր մեծարգո հոբելյարը հետ նայելով՝ զարմանում է. «Այս ինչպե՞ս անցան տարիներս, ախր դեռ շա՜տ անելիքներ ունեմ»:

Այսպես են մտածում իսկական մանկավարժները. ծերանում են, բայց հոգով մնում են միշտ մանուկ, միշտ ջահել, միշտ կյանքին ծարավ:

Ավդուռի Ս.Սաֆարյանի անվան հիմնական դպրոցի ողջ կոլեկտիվը խորին ակնածանքով շնորհավորում է սիրելի գործընկերոջը՝ բարու անխոնջ սերմնացանին՝ ծննդյան 50-ամյակի առթիվ և ցանկանում նրան անսպառ, երիտասարդական ավյունով լեցուն բեղմնավոր աշխատանք ու երջանկություն:

Ավդուռի հիմնական դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

ՀԻՇԵԼ ԵՎ ՄԵԾԱՐԵԼ՝ ԱՊՐՈՂՆԵՐԻՍ ՊԱՐՏՔՆ Է

Հունիսի 11-ին Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցում՝ ամառային արձակուրդի շրջանին ոչ այնքան հարիր մարդաշատ հավաքույթը նվիրված էր դպրոցի շրջանավարտ, զոհված ազատամարտիկ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր Ջոն Բեգլարյանին՝ ծննդյան 45-ամյակի առթիվ, որին ներկա էին ԼՂՀ ՊԲ գեներալ-մայոր Վարդան Բալայանը, ԿԳՆ ռազմահայրենասիրական և ֆիզդաստիարակության, հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Վալերի Գրիգորյանը, քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանը, Ջոն Բեգլարյանի հարազատները, մարտընկերներն ու դպրոցական ընկերները, ուսուցիչներ:

Ուրախության և տխրության զգացումները միախառնվել էին. ուրախության, որ տարիներ անց հարազատ կրթօջախի հարկի տակ հավաքվել են համադասարանցիներով, ուսուցիչներով և վերհիշում են դպրոցական տարիները, վերապրում մանկության գեղեցիկ հուշերը: Բայց նաև տխրության պահ էր, քանզի դասարանցիներից ոմանք չկան, դարձել են հավերժի ճամփորդ, որոնցից մեկն էլ Ջոն Բեգլարյանն է, մեկն այն քաջորդիներից, որ առաջին պլան մղեց հայրենիքի պաշտպանությունը և չիմացյալ մահը մահ է, իմացյալ մահը՝ անմահություն գիտակցումով նետվեց պայքարի թոհուբոհի մեջ:

Միջոցառումը վարողների՝ ուսուցչի ու ՊԲ զինծառայողի խոսքերը բխում էին բոլորի սրտից. հուշ-ցերեկույթը թող լինի ապրողների կողմից խոնարհում ազատամարտի նվիրյալների և մասնավորապես՝ Ջոն Բեգլարյանի հիշատակին:

Ի խորոց սրտի աղոթք առ Աստված զոհված ազատամարտիկների հիշատակին կարդաց Արցախի թեմի հոգևոր սպասավորը:

Ջոն Բեգլարյանի կարճատև կյանքի, բայց իմաստալից գործունեության մասին պատմեց նրա մարտական ընկեր Սերգեյ Գրիգորյանը:

Ջոնը ընդամենը 24 տարվա կյանք ապրեց, բայց անմահացավ իր սխրանքներով:

Կալինին և Նինա Բեգլարյանների ընտանիքում ծնված երեք եղբայրներից միջնեկն էր Ջոնը: Երեքն էլ հաճախել են Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 դպրոց: 8-րդ դասարանն ավարտելուց հետո սովորել է գիշերօթիկ դպրոցում, այնուհետև պարտադիր զինվորական ծառայություն անցել խորհրդային բանակում: Վերադառնալով՝ ամբողջովին նվիրվեց Արցախյան ազատամարտին: Զինվորագրվեց 2-րդ վաշտին, որտեղ նաև իր երկու եղբայրներն էին կռվում: Մասնակցել է մի շարք մարտական գործողությունների՝ Խոջալուի, Խրամորթի, Շուշիի, Քաշաթաղի շրջանի ազատագրմանը և ամեն տեղ իրեն դրսևորել որպես խիզախ զինվոր: Ընկերասեր էր, անվախ և օրինակ էր ծառայում շատերին: 2-րդ վաշտի հիմքի վրա կազմավորվում է 71-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակը, և այդ կազմում Ջոնը մասնակցել է մի շարք ռազմագործողությունների, Մարտակերտի շրջանի պաշտպանական գործողություններին, որտեղ պայքարը գնում էր ամեն մի թիզ հողի համար: Այդտեղ 1992թ. պայքարը գնում էր Մարտակերտի և Ասկերանի շրջանների գյուղերի ազատագրման համար: 1993թ.Կուսապատի բարձունքի գրավման ժամանակ նա վիրավորվում է մի քանի տեղից: Բայց այդ վիճակում անգամ չէր ուզում դուրս գալ ռազմի դաշտից, և միայն մարտական ընկերների հորդորով նրան հանում են մարտադաշտից: Փոքր-ինչ ապաքինվելուց հետո նորից շարունակում է իր պայքարը գումարտակի կազմում և իր ներդրումը ունենում այս անգամ Քարվաճառի և Աղդամի գրավման ժամանակ: Պատերազմը, թվում է, թե ավարտվել էր, հարաբերական անդորր էր, սակայն 1994թ. մայիսի 13-ին Սեյսուլանի մոտ ծանր վիրավորվում է և… հավերժանում: Իսկ 1992թ. փետրվարի 1-ին Խրամորթի ազատագրման ժամանակ զոհվել էր եղբայրը՝ Օլեգը: Ծնողների ցավը անչափ էր, հույսները երրորդ որդին էր՝ Հովիկը, որ պիտի մնար որպես մխիթարանք, սակայն ողբերգական ճակատագիրը չլքեց նրանց, 3-րդ որդին էլ հեռացավ կյանքից՝ մեծ ցավ պատճառելով ծնողներին և բոլոր նրանց ճանաչողներին, մի անձնավորություն, որ Շարժման առաջին իսկ օրերից՝ պարտիզանական շարժումից սկսած մինչև վերջ պայքարել է հանուն Արցախի ազատագրության:

Հուշ-ցերեկույթի բոլոր մասնակիցների համար դժվար էր արտահայտվել եռակի որդեկորույս մոր առաջ:

Ջոնի ինքնանվիրումը չափ ու սահման չուներ: Նրա մոտ գաղափարն ու գործը զուգահեռ ընթացք ունեին և իրենց արտացոլումն էին գտնում նրա ամեն մի արարքում՝ հաստատում է նրա մեկ այլ մարտընկեր Գենադի Գրիգորյանը:

Ջոնի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, դասղեկ Նաիրա Թամրազյանը խոստովանեց, որ նման հույզ երբևէ չի ապրել. իր աշակերտ Ջոնը հավաքել է ուսուցչական կոլեկտիվին ու դասարանին: Դասարանը մի հսկա ծառ պիտի դառնար, ու պիտի համալրեր Արցախի մեծ անտառի ծառերի շարքը: Ավա՜ղ, Արցախյան գոյապայքարում ճղակոտոր եղան դասարանի ծառի մի քանի ճյուղեր: Հոգատար և ուշադիր դասղեկը, որը երկրորդ մայր էր դասարանի համար, ցավով արտաբերում է իր այդ աշակերտների անունները՝ Արտիկ, Արտավազդ, Ալբերտ, Ռոբիկ, Ջոն…, Ջոնի ծննդյան օրն էր, և հիշողությունները պտտվում էին Ջոնի շուրջը: Նա գերազանցիկ չի եղել, օլիմպիադաներում դպրոցի համար գովասանագրեր չի բերել, թվում է՝ ոչինչ չի արել այնպես, ինչպես լավ սովորողները կամ հնազանդներն են անում: Ուսուցչուհու հիշողության մեջ նա մնացել է որպես ներքին ազնվական պահվածք, կիրթ, մաքուր հոգի ունեցող աշակերտ, որը կարողանում էր իր շուրջը համախմբել ընկերներին: Չկար դասարանում մեկը, որ Ջոնին պաշտելու աստիճան չսիրեր: Նա ընկերասեր էր, ազնիվ, անաչառ, մի քիչ չարաճճի, հումորով, կյանքով էր լցնում դասարանը: Ուսուցչուհին «մեղավորության» զգացում ունի Ջոնի մոր առաջ՝ նրա որդու մեջ վարակիչ հայրենասիրություն սերմանելու համար, որը նրան մղեց դեպի առաջին գիծ, թշնամուն դեմ հանդիման, բայց «մեղավոր» է նաև ծնողը, քանզի մինչ դպրոց մտնելը, ուսուցիչներին աշակերտելը, Ջոնը հայրենասիրության գենը ժառանգել է մոր կաթի հետ, այդպիսին դաստիարակվել ընտանիքում, որը հետո պիտի հերոսության վերածվեր: Ներկաների համոզումը մեկն էր. Ջոնը բացակա չէ, նա հ. 7 դպրոցի առօրյայի մեջ է: Նա միշտ հառնում է պատմության, գրականության դասերից, իր կերպարով կենդանի օրինակ է:

Կանցնեն տարիներ, ամեն մի սերունդ, վերաթերթելով մեր պատմության արյունոտ, բայց հերոսական էջերը, այնտեղ կհանդիպի նաև Ջոն Բեգլարյանին, գլուխ կխոնարհի, կհպարտանա, կխոստանա կատարել նրա պատգամները: Ծնողների համար թող սփոփանք լինի, որ Ջոնը միայն ֆիզիկապես է բացակա, նա բոլորի հոգում է՝ ամեն նոր ծնվող մանկան հետ, ծնվելիք մեր ժողովրդի զավակների հետ, սահմանը պահող մեր հերոսների, մեր այբ-բեն կերտող աշակերտների, մեր երկիրը շենացնող բանվորների, մեր հարցը բարձր ամբիոններում հնչեցնող այրերի հետ է, մեր նորանոր սխրանքների ու հաջողությունների ուղեկիցը:

Որպես ասվածի շարունակություն՝ դպրոցի երեխաների ելույթներն էին՝ հրեղեն խոսքով, հայրենասիրական երգերով ու պարերով, ինչպես նաև՝ ՊԲ «Ասպետ» համույթի ոգեշունչ կատարումները: Միջոցառումը վարող ՊԲ զինվորն այնքան էր ազդվել երեխաների ոգեշնչումից, որ երախտագիտություն հայտնեց ուսուցիչներին՝ նման սերունդ դաստիարակելու համար: Ուսուցիչների կողմից իր հերթին Ն. Թամրազյանը շնորհակալություն հայտնեց զինվորին և ի դեմս նրա՝ բոլոր զինվորներին՝ դպրոցում սովորած հայրենասիրական դասերը դիրքերում պատվով ի կատար ածելու համար:

Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Կառլեն Մարգարյանը շարունակեց մեծարանքը կյանքի քննությունը գերազանց հանձնած, հայրենասիրության իսկական տիպար Ջոն Բեգլարյանի՝ իր կյանքով իր անմահությունը կերտած քաջորդու նկատմամբ:

Իսկ ամենամեծ երախտագիտությունը ուղղված էր ծնողներին, որ նման որդիներ են տվել հայրենիքին:

Բոլորն անչափ հուզվել էին հերոսի մոր՝ Նինա Բեգլարյանի կարճ, բայց խոսուն ելույթից, որի ցանկությունն այն է, որ ապրողները չմոռանան վասն հայրենյաց իրենց կյանքը զոհաբերածներին, չլինի պատերազմ, Արցախ աշխարհում խաղաղությունը թևածի: Թող ոչ մի հայ ընտանիքի մայր արցունք չտեսնի:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԴԱՌՆԱՆՔ ՈՒ ՀԻՇԵՆՔ…

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ:
Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի հետ ոռնացիք վայրագ:
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

Հովի. Շիրազ

Խաղաղությու՜ն…քնքուշ ու մեղմիկ երաժշտություն, քո ելևէջները շոյում են յուրաքանչյուրին, ալեկոծում բոլորի հոգին: Խաղաղությո՜ւն՝ դու թանկ մասունք՝ վաստակված միլիոնավոր զոհերի գնով: Ինչքան հեշտ է կորցնել քեզ, խաղաղություն. մի արկի պայթյուն, մի գնդակի սուլոց, և արդեն վերջ խաղաղությանը, բայց ինչքա՜ն-ինչքան դժվար է նորից վերագտնել քեզ: Պատերազմ հրահրողները երբեք էլ չեն հասկանում, թե ինչքան անմարդկային տանջանքներ կան այդ մի հատիկ բառում, ինչքան կարկտահարված ճակատագրեր է նա իր հետևում թողնում: Եվ կարծես անեծք լինի կախված մեր ժողովրդի բախտին. լինելով հաշտ ու խաղաղասեր ազգ՝ մենք ստիպված ենք միշտ դաս տալ մեր թշնամուն, քանի որ նա լկտի ու ամբարտավան իր մռութն անընդհատ խոթել է ուզում մեր երկիր: Այդպես է եղել Տիգրան Մեծից մինչև Վարդան, Ավարայրից մինչև Սարդարապատ: Այդպես է և հիմա: Թշնամին փորձում է բռնանալ մեր ազատ կամքին, բայց մոռանում է, որ մենք քիչ ենք, բայց հայ ենք, հաղթող ենք պայքարի մեջ, կռվի դաշտում: Մեզ ներքաշեցին կռվի մեջ՝ առանց մեր կամքը հարցնելու, առանց ժամանակ տալու: Մեզ թվում էր, թե քաղաքակիրթ աշխարհն արժանի դաս կտար մեր թշնամուն, և վերջապես արդարությունը կթագավորի: Սակայն մեզ վիճակված էր սպասել երկար: Թուրքը չկարողացավ թմրեցնել մեր զգոնությունը, չօգնեց նրա վաղեմի երկերեսանիությունը: Նա սովոր էր, որ մենք ապրեինք մեր հողում՝ նրան խնդրելով, սովոր էր, որ հայը լինի խեղճ, համբերող, լուռ ու գլխիկոր: Բայց նա մոռացել էր մի շատ պարզ ու հասարակ բան, մոռացել էր, որ գործ ունի դարաբաղցու հետ, որի «հաստակող» լինելու մասին գիտի անգամ աֆրիկացի մանուկը: Եվ ցնցվեց թուրքը, երբ լսեց մեր ընդվզումի ձայնը: Զարմացավ. այս որտեղի՞ց այսքան համարձակություն, որտեղի՞ց այսքան ուժ: Եվ սկսվեց, սկսվեց այն, ինչին մենք պատրաստ չէինք, սակայն սպասում էինք մեր «եղբայրներից»:

Արցախի ազատության հարցն էր դրված զոհասեղանին: Եվ քաջ գիտակցելով, որ պատերազմը զոհեր է պահանջում ու հիշելով «Գիտակցված մահն անմահություն է» հայտնի ճշմարտությունը՝ մեր քաջերը նետվեցին պայքարի: Մեր զոհված ազատամարտիկների արյունը խառնվեց մայր հողին՝ ավելի թանկացնելով նրա ամեն մի թիզը:

Արցախյան պայքարում իրենց կյանքը զոհեցին հարյուրավոր քաջորդիներ: Նրանք ընկան՝ սրբագործելով հայրենի հողը: Այդ քաջորդիներից մեկն էլ Արթուր Հայրապետյանն է, ում անունն է կրում Խնապատի միջնակարգ դպրոցը:

Ծնվել է 1963 թ. հունիսի 16-ին Ասկերանի շրջանի Խանաբադ գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո զորակոչվել է խորհրդային բանակի շարքերը, որից հետո ընդունվել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը և այն ավարտել 1985 թվականին: Այնուհետև ուսումը շարունակել է Լիտվայում՝ դեսանտային ուսումնարանում, ծառայության է անցել Կիրովաբադի դեսանտային զորամասում: Ավարտելուց հետո վերադարձել է հայրենի գյուղ և սկսած սեպտեմբերից՝ ռազմագիտություն դասավանդել ծննդավայրի միջնակարգ դպրոցում:

Արթուր Հայրապետյանը զոհվել է 1992 թվականի հունիսի 12-ին Խնապատի «Նռան ձոր» կոչվող տեղամասում:

Ենթասպա Արթուր Հայրապետյանն իր քաջագործությունների համար արժանացել է «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի և «Մայրական երախտագիտություն՝ Արցախի քաջորդիներին» մեդալի:

Ամուսնացած էր, ունի երկու որդի:

Նա զոհվեց ամենավառ ու ծաղկուն հասակում, երբ դեռ պետք է ապրեր, ստեղծեր, փայփայեր իր զավակներին:

Արթուր Հայրապետյանի և մեր բոլոր զոհված ազատամարտիկների հիշատակը միշտ վառ կմնա մեր հուշերում: Այդ հուշերը կփոխանցվեն դարեդար մեր խոսքի, մեր պատմությունների, մեր հուշարձան-կոթողների միջոցով, որպեսզի մեր սերունդները միշտ հիշեն իրենց երկրին խաղաղություն բերած զինվորի մասին: Մենք իրավունք չունենք մոռանալու նրանց, և դրանց վառ ապացույցն են Արցախի գյուղերում կառուցված հուշարձան-աղբյուրներն ու հուշ-կոթողները.

Կա՛նգ առ, անցորդ, գեթ մի վայրկյան,
Աղբյուրի մոտ այս դիմացի.
Լեռնաշխարհում իմ հայկական,
Ո՞ր գյուղին էլ գնաս այցի,
Կարկաչու՜մ է նա անարատ,
Երգի նման հայոց հողի…
Անցո՛րդ, ջրին ականջ արա
Եվ խոնարհվի՞ր այս կոթողին

Գևորգ Էմին

Այո՛, դժբախտաբար, մենք հարուստ ենք հուշ-կոթողներով: Պատմության քառուղիներում հալածվելով ու պայքարելով՝ մենք դարձել ենք ժլատ խոսելու մեջ, և մեր սրտի ճիչն ամփոփել ենք մեր խաչքարերի, հուշարձանների մեջ, շունչ ու հոգի ենք տալիս քարին ու ավանդում սերունդներին:

Բավ է խոսել պատերազմի մասին, բավական է, թող էլ երբեք մարտի հրաման չհնչի, երկինքը ջինջ ու լուսավոր լինի, երբեք զինվորը քար դարձած չվերադառնա իր հայրենի օջախը: Բավական է, քաղաքակի՛րթ աշխարհ, ունկնդրի՛ր արցախցու կանչին, դադարեցրո՛ւ բոլոր պատերազմներն աշխարհում: Երկրին խաղաղություն է պետք. ամուր, կայուն խաղաղություն, իսկ մենք երբեք չպետք է մոռանանք մեր հավերժի ճամփորդներին…

Փա՜ռք ու պատի՛վ ձեզ….

Առլենա ԳԱՍՊԱՐՅԱՆ
Խնապատի Ա.Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի

ԱՅԼԱԶԱՆ

ՍԵՐԸ ԿՓՐԿԻ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ

Եթե սեր չկա, ինչի՞ համար
Պիտի չարչարվեմ չար աշխարհում.
-Կըգնամ հողի գիրկը խավար,
Կըլռեմ, որպես քարն է լռում...

Մեղմահունչ ու մեղմածայն հոսում են բառերը, ու մեղմածայն հոսում են բառերը Անահիտ Կարապետյանի շուրթերից ու տարածվում մանկապարտեզի փոքրիկ դահլիճում: Յուրաքանչյուր բառ հասնում ունկնդիրների ականջին, ու ամեն մեկը փորձում է սինթեզել այդ բառերը...

Իսկապես, սերը մի հիասքանչ ծաղիկ է, որ գտնվում է անդունդի եզրին, բայց պետք է արի լինել՝ այն պոկելու համար՝ Անահիտին շարունակում է Լյուբա Ղայամյանը:

Երեկոն, որ կազմակերպել են մանկապարտեզի աշխատողները, քանի գնում, այնքան հուզիչ ու տպավորիչ է դառնում: Առաջին անգամ չէ, որ նման միջոցառում է կազմակերպվում: Քա՜նի–քա՜նի անգամ մանկապարտեզի հարկի տակ անհոգ րոպեներ են ապրել գյուղի երիտասարդ կանայք ու աղջիկները, թոշակառու ուսուցիչներն ու տնային տնտեսուհիները, որոնք միշտ էլ գոհ ու հագեցած տպավորություններով են հեռացել իրենց օջախներ, որ կրկին հույսով, հավատով սպասեն հաջորդ հանդիպմանը...

Հանդիպումն իսկապես չուշացավ: Գարնանային լուսապայծառ երեկո էր: Շուրջբոլորը վարդի ու հասմիկի բույր էր, թռչունների հոգեցունց ծլվլոց: Մեկիկ-մեկիկ ժամանում էին հրավիրվածները: Այս անգամ երեկոյի թեման էր՝ «Սերը կփրկի մարդկությանը»: Աշխարհը դառնացած է: Ամենուր պայքար, ամենուր նախճիր, անմեղ մարդկանց կործանում, անհոգ մանչուկների ճակատագրերի խեղաթյուրում: Ի՞նչ են ուզում առհասարակ պատերազմ հրահրողները: Մի՞թե հնարավոր չէ ապրել միայն սիրով, մի՞թե սերը խանգարում է մարդուն. մեկը մյուսին շարունակելով՝ ասում էին Անահիտը (մանկապարտեզի դաստիարակչուհի) և Լյուբան (ակումբի տնօրեն): Քանի գնում, երեկոն դառնում է ավելի գունեղ, քանզի հրավիրվածների երգն ու ասմունքը, աֆորիզմներն ու պարը միահյուսվում են միմյանց և դառնում անկրկնելի մի հեքիաթ: Հնարավոր չէ նաև անտեսել այն փոքրիկ սցենարները (հեղինակ՝ մանկապարտեզի տնօրեն Գայանե Հովհաննիսյան), որ ներկայացրին Լյուբա Ղայամյանն ու Նարինե Վադանյանը (դաստիարակչուհի):

Միայն ծիծաղ ու անհոգ վայրկյաններ էր ապրում յուրաքանչյուր մասնակից: Կեսգիշեր էր, բայց ոչ ոք չէր շտապում թողնել փոքրիկների հանգրվանը: Երկնակամարից էլ աստղերն ու լուսինն են ծիկրակում, ասես իրենք էլ համամիտ են, որ աշխարհում, ողջ աշխարհում թևածի սերը, որ զինվորը անխռով ծառայի, մանչուկը հեգի հայոց այբն ու գիմը, հարսն ու փեսան վայելեն իրենց սերը, իսկ երկնակամարում թևածեն խաղաղության սպիտակաթև աղավնիները...

Լիանետա ԻՇԽԱՆՅԱՆ
Աշանի միջն. դպրոցի հ.լեզվի եւ գրականության ուսուցչուհի

Խոսք հիշատակի

ՀԱՄԵՍՏ ՈՒ ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ



Կյանքից հեռացավ չափարցի վաստակաշատ ուսուցիչ Վլյաթ Արշակի Սևումյանը՝ իր ծննդյան յոթանասունյոթամյակից տասն օր անց:

Ծնվել է 1938 թ. մայիսի 1-ին չարքաշ հողագործի ընտանիքում: Հայրն ու մեծ եղբայրը զորակոչվել էին ֆաշիզմի դեմ մղվող պայքարին (1941-1945), ուր հայրը զոհվեց՝ չտեսնելով կրտսեր էդուարդին: Բազմանդամ ընտանիքի հոգսը մոր ուսերին էր (վեց երեխա ուներ): Երկու ավագ եղբայրների հետ անչափահաս ու գերհամեստ Վլյաթը մորն օգնում էր ամեն աշխատանքում, հատկապես՝ ամռան կիզիչ արևի տակ հասկահավաքին (կեսօրվա դադար գոյություն չուներ. լեռնային գյուղում նույնիսկ զառամյալ ծերունիները, կանայք ու վտիտ երեխաները իրենց ուժերի ներածին չափ մասնակցում էին ցորենի հասկերի հավաքմանը): Ուսման ծարավ մանչուկ էր: Դպրոցում ուսման առաջավորներից էր: 1955 ավարտելով յոթերորդ դասարանը՝ մեկնում է Շուշի և ընդունվում մանկավարժական տեխնիկում: Չորս տարի հետո ավարտելով այն՝ մեկնում է Ժդանովի շրջանի նորաստեղծ հայկական Նորագյուղ՝ Թազաքենդ, ուր կային բավականին թվով համագյուղացիներ և աշխատում որպես տարրական դասարանների ուսուցիչ: Նաև ծառայել է բանակում, հետո 1967- 72 թթ. ավարտել է Բաքվի Մ. Ֆ. Ախունդովի անվան մանկավարժական ինստիտուտը՝ մասնագիտանալով ռուսաց լեզվի և գրականության մանկավարժական մասնագիտության մեջ: Ընտանիք է կազմել՝ ունենալով չորս զավակ: Տիկինը ևս ուսուցչուհի էր, հիմա՝ թոշակառու: Աշխատել է նաև որպես կազմակերպիչ, ուսմասվար, երեկոյան դպրոցի տնօրեն: Անաչառ էր, աշխատասեր: Ուներ ուսուցչին յուրահատուկ բոլոր խրախուսելի հատկանիշները՝ հատկապես նախանձելի համբերություն, նուրբ ժպտալու ընդունակություն, գրավոր կամ բանավոր սխալն անմռունչ ուղղելու և մանկավարժական վարպետությամբ ուսուցանելու հատկանիշ: Արցախյան գոյապայքարի ժամանակ Ժդանովից տեղափոխվել է հայրենի գյուղ և ոչ թե դեգերել օտար ափերում: Ազերիները, գրավելով Չափարը, ավերել էին նաև Վլյաթ Սևումյանի նորակառույց բնակարանը: Համբերատար ու աշխատասեր ուսուցիչը վերակառուցել է այն ու մնացել հայրենի օջախում՝ շարունակելով մանկավարժական փորձառու գործունեությունը: Շուրջ երկու տասնամյակ նորից շարունակել է բազմափորձ մանկավարժական գործունեությունը: Խորհրդային կարգերի ժամանակ վաստակել էր ավագ ուսուցչի կոչում, հետո արժանացել բազմաթիվ շքանշանների ու պատվոգրերի: Ազնիվ, անկեղծ ու անհիշաչար դաստիարակ էր, նվիրյալ մասնագետ, համեստ ու բարեմիտ քաղաքացի, բարի ու կիրթ մարդ, հայրենասեր չափարցի, անկաշառ ընկեր, օրինակելի ընտանիքի ղեկավար: Բոլորը սիրում ու հարգում էին նրան: Մինչև 2013 թվականի օգոստոսն աշխատել էր մանկավարժի անմնացորդ նվիրումով: Ավագ դուստրը՝ Իրինա Սևումյանը, նույն դպրոցի տնօրենն է:

Երկու տարի անգամ չդիմացավ առանց շատ սիրելի մանկավարժական գործունեության... Չափարի ամենաբարի, սրտացավ ու արդարամիտ մարդկանցից էր: Վլյաթ Սևումյանի կեսդարյա մանկավարժական անմնացորդ գործունեությունը միշտ բարի ու լավ հիշողություններով կգրվեն... Միշտ քեզ կհիշենք ու կհպարտանանք քեզնով, մեր շատ սիրելի ընկեր Սևումյան:

Չափարի Արմեն Սաղյանի անվան միջն. դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԻՆ

Մեկ ուսումնական տարի ևս գլորվեց՝ ավարտին հասցնելով իր շրջապտույտը: Ետևում մնացին դասերն ու դասամիջոցները, ծրագրերն ու դասագրքերը, սերտած ու դեռ չսերտած դասերը: Սակայն դա դեռ ավարտ չէր նախադպրոցական խմբի երեխաների համար: Նրանց պարապմունքները շարունակվում էին....

Օրերս կայացավ Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի նախադպրոցական «Արևիկ» խմբի հրաժեշտի հանդես-միջոցառումը: Ուրախությամբ պետք է նշեմ, որ այս ուսումնական տարում կտրուկ աճել էր նախադպրոցական խմբի աշակերտների թիվը՝ ուսումնական տարվա սկզբին հասնելով մինչև 75-ի՝ երեք խմբերի ընդգրկմամբ: Իհարկե, այստեղ իր մեծ դերակատարությունն ունեցավ նաև դպրոցական նորակառույց ու հարմարավետ շենքը, որը մեծ, սպասված նվեր էր բոլոր ուսուցիչներին, աշակերտներին ու նրանց ծնողներին:

Դպրոցի դահլիճը կահավորված էր տոնականորեն. փուչիկներն ու ծաղիկները, երեխաների տոնական ու կոկիկ հանդերձանքը, հեքիաթների հերոսներին համապատասխան բեմական շորերը ստեղծում էին տոնական, տպավորիչ ու վառ մթնոլորտ: Բոլոր ներկաները՝ հրավիրված ուսուցիչներն ու ծնողները, անհամբեր սպասում էին երեխաների ելույթին: Եվ վերջապես հնչեց ողջույնի խոսքը.

-Ողջունում ենք սրտագին
Ձեզ՝մեր հյուրեր թանկագին,
Ի՞նչ եք կարծում, որտե՞ղ ենք մենք,
Դասարանու՞մ, թե պարտեզու՞մ:
-Մի կասկածիր, փոքրի՛կ տղա,
Եվ դուք՝ հյուրեր թանկագին,
Մենք հրաշք այս դպրոցի

Ծաղիկներն ենք սրտագին:

Միջոցառումը կարծես մի բաց պարապմունք էր՝ անցած բոլոր թեմաների ամփոփմամբ: Նրանք հանդես եկան անթերի՝ համեմելով օրը գիտելիքների արտահայտմամբ, երգ ու պարով, բեմականացումներով: Իրար էին հաջորդում երեխաների հուզառատ ու թոթովախոս խոսքերը. ներկայացվում էին և՛ անցած բոլոր հեքիաթները, և՛ բոլոր սերտած ոտանավորները, և՛ երթևեկության կանոններն էին վերհիշում, և՛ կետադրական նշանները:

Բոլոր ներկաներին հիացմունք պարգևեցին երեխաների հեքիաթների, ոտանավորների, երգերի իմացությունն ու գեղեցիկ ներկայացումը: Երեխաները իրենց խոսքում շնորհակալություն հայտնեցին իրենց կրթած, դաստիարակած և իրենց խնամքով զբաղված աշխատողներին՝ խոստանալով իրենց լավ դրսևորել դպրոցում:

Խմբի դաստիարակ Զարուհի Ապրեսյանը, որ երկար տարիների մանկավարժ է, երեխաների մեջ սերմանել է սեր հայրենիքի նկատմամբ, ընտանիքի, ազգային ավանդույթների, մայրենի լեզվի, հարգանք սեփական անձի, շրջակա միջավայրի նկատմամբ: Այդ ամենն վերարտադրվեց ամբողջ միջոցառման ընթացքում ասույթների, երգ ու պարի միջոցով:

Միջոցառմանը ներկա էին ուսուցիչներ, ծնողներ, դպրոցի տնօրեն Վ.Ղահրամանյանը: Միջոցառման վերջում հանդես եկավ ծնող Գ.Ղուլիյանցը, որը շնորհավորանքի ու շնորհակալական խոսքեր հղեց և՛ դաստիարակին՝ նրա բոլորանվեր ու անխոնջ աշխատանքի, և՛ խմբի 28 երեխաներին՝ նրանց մաղթելով բարի երթ դեպի նոր կյանք, դեպի դպրոց՝ ցանկանալով անբեկում ու հաջող ճանապարհ իրենց ողջ կյանքի ընթացքում: Բոլորն էլ մեծ ոգևորությամբ ու հաճելի տպավորություններով հեռացան դահլիճից:

Սուսաննա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Ստեփ. հ. 6 հիմնական դպրոցի փոխտնօրեն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Շուշիի Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարանը(ԵՄԱՈՒ) հայտարարում է 2015 -16 ուստարվա ընդունելություն՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

- Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում
- Շենքերի և կառույցների սանիտարատեխնիկական սարքավորումներ
- Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում
- Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում

Ուսումնարանը ապահովված է հանրակացարանով,ճաշարանով, լիարժեք սարքավորված արհեստանոցներով, համակարգչային լսարաններով, գրադարանով, մարզասրահով և սպորտային հրապարակով:

Ուսումնարանի արտադրական ուսուցման վարպետները և տնօրինությունը վերապատրաստվել են ֆրանսիական արհեստագործական ուսումնարաններում և շինարարական ընկերություններում:

Ուսումնարանի սովորողները սովորելուն զուգահեռ աշխատելու են շինարարական ընկերություններում, ստանալու են պետական կրթաթոշակ և աշխատավարձ:

Ընդունելությունը կազմակերպվում է 9-ամյա կրթության հիմքի վրա՝ անվճար հիմունքներով:

Ուսման տևողությունը 3 տարի է, շրջանավարտներին տրվում է պետական նմուշի դիպլոմ:

Դիմումներն ընդունվում են սույն թվականի հունիսի 1-ից մինչև օգոստոսի 25-ը, ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 16:00:

Դիմումների համար այցելել ք. Ստեփանակերտ , Թումանյան փ. 62 ,
ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն, 2-րդ հարկ, 3-րդ սենյակ:
Մանրամասների համար զանգահարել (097) 35 71 93, (097) 12 62 76

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- **դիմում (լրացվելու է տեղում)**
- **3 x 4 չափսի երկու գունավոր լուսանկար (վերջին մեկ տարվա)**
- **ավարտական վկայականը (բնօրինակը)**

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 29.06.2015թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: